2023

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀՌՀ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

www.tvradio.am

Տիգրան Հակոբյան,
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ

Հարգարժան խորհրդարան,

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը պատասխանատվության մեծ զգացումով ներկայացնում է 2023 թվականի գործունեության մասին տարեկան հաղորդումը: Ինչպես վերջին տարիների, այնպես էլ նախորդ տարվա Հանձնաժողովի գործունեության առաջնային նպատակներից էին՝ ապահովել Հանձնաժողովի կարգավորման ներքո գտնվող տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների ազատ և անխափան գործունեությունը, առավելագույնս նվազեցնել իշխանությունների միջամտությունը կարգավորող մարմնի և հեռարձակողների գործունեությանը, բարձրացնել հանրության վստահությունը Հանձնաժողովի հանդեպ:

Հանձնաժողովը քաջ գիտակցում է, որ անհնար է ձեռք բերել հանրության վստահությունն ու հարգանքը, եթե կարգավորող մարմինը չի՛ ապահովում գործունեության անաչառությունն ու անկախությունը, ոնակ չէ՛ ձերբազատվելու քաղաքական, կոմերցիոն, ընկերական կողմնակի ազդեցությունից:

Տեսալսողական ծառայություններ մատուցողների և սպառողների շահերի, պահանջների ու իրավունքների սպասարկումն ենթադրում է արդյունավետ կարգավորման և կարծիքների արտահայտման ազատության միջև հավասարակշռության հստակ պահպանում, ինչը ևս եղել է Հանձնաժողովի գործունեության հիմքում:

Հարկ եմ համարում նաև մեր բոլորի ուշադրությունը հրավիրել դեռևս չլուծված խնդիրների վրա, որոնք մեծապես կապված են տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության հետ: Հարկ է արձանագրել, որ այժմյան կարգավորումներն այլևս չեն ապահովում մեր պետության տեղեկատվական անվտանգությունը, չեն դնում արդյունավետ պաշտպանիչ պատնեշներ կեղծ տեղեկատվության, «թշնամանքի լեզվի» և վտանգավոր մանիպուլյացիաների (մտրաշահարկման) տարածման առջև, կարգավորումից դուրս են թողնում Հայաստանի Հանրապետության քաղաքացու ֆիզիկական և հոգեկան առողջության վրա բացասաբար ազդող տեսալսողական տեղեկատվական հոսքերը:

Կարգավորման այժմյա նորմերը լիցենզավորված հեռուստառադիոընկերություններին չեն առաջարկում բարենպաստ պայմաններ՝ պատրաստելու և տարածելու պետական և հանրային շահը սպասարկող բովանդակություն, իսկ անհավասար մրցակցային միջավայր են ստեղծում հանրային մուլտիպլեքսում հեռարձակվող և տեսալսողական ծառայություններ մատուցող այլ ընկերությունների և անհատների միջև: Ուստի, թվային տեխնոլոգիաների՝ կայծակնային արագությամբ զարգացման պայմաններում մեզ անհրաժեշտ է ոչ միայն կանխատեսել և արագ արձագանքել մեդիա միջավայրի աննախադեպ փոփոխություններին, այլ նաև պետության տարբեր ինստիտուտների և հասարակության լայն շերտերի համար ևս առաջնային խնդիր դարձնել տեսալսողական հաղորդումներում մասնագիտական և տեխնիկական ստանդարտների պահպանումը, հեռարձակողների իրական անկախության ու խոսքի ազատության ապահովումը, ինչի շնորհիվ հնարավոր է նվազեցնել հանրային շահը անտեսող բովանդակության տարածումը և խթանել որակյալ բովանդակության ծավալն ու ազդեցությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

2.
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

3.
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԿԱԽ, ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 7

4.
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 10

5.
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12

5.1 Հեղինակագործման գործընթաց 13
5.2 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ 15
- Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ
- Մայրաքաղաքային սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ
- Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ
5.3 Հանրային մուլտիպլեքս ցանցի խնդիրների վերաբերյալ 17
5.4 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ 20
- Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ
- Երևան քաղաքում սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ
- Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ
5.5 Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ 22
- Հանրային հեռարձակողներ
- Օտարերկրյա տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ
5.6 Մալուխային կամ այլ ցանց օգտագործող ցանցային օպերատորներ 24
5.7 Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեություն 26

6.
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 26

6.1 Միցույթներ 26
- Տեսալսողական ծրագրերի հանրապետական սփռում
- Լսողական ծրագրերի մարզային սփռում
- 2023 թվականի լիցենզավորման, լիցենզիայի գործողության դադարեցման ցուցանիշներ

7.
ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 31

7.1 Ընդհանուր տեղեկություններ մշտադիտարկման մասին 31
7.2 Էթիկայի նորմերի պահպանման մշտադիտարկում 34
7.3 Ընտրությունների լուսաբանման մշտադիտարկում 35

8.
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 39

9.
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 43

10.
ԴԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ 48

11.
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՅԻ ՄՈՒՏՔԵՐ 49

12.
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 50

13.
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 54

14.
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ 55

15.
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 55

16.
2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ 56

17.
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 58

1. Ներածություն

Հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների (Հեռարձակողների), ցանցային օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսալսողական մեդիայի մասին», «Ձանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին» օրենքներով, տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39-րդ հոդվածների համաձայն՝ կարգավորող մարմինը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Ազգային ժողով է ներկայացնում 2023 թվականի գործունեության և տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում:

Տարեկան հաղորդման մեջ հակիրճ ներկայացված են կարգավորող մարմնի իրականացրած գործառույթների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ և վիճակագրական տվյալներ, որոնք հիմնված են Հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների, մշտադիտարկումների, ուսումնասիրությունների, վերլուծությունների և հարցումների վրա: Ներկայացված են նաև այն խնդիրները, որոնց լուծումները կձևավորեն տեսալսողական ծառայությունների մատուցման և սպառման արդիական համակարգ, կբարձրացնեն կարգավորող մարմնի աշխատանքների արդյունավետությունը:

2. Տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի հակիրճ նկարագրություն

Ինչպես արդեն նշվել է, Հանձնաժողովը, կատարելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ հոդվածի և Օրենքի 39-րդ հոդվածի պահանջը, Ազգային ժողովին է ներկայացնում իր նախորդ տարվա գործունեության և Հեռարձակողների ծրագրերում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում՝ անդրադառնալով նաև հեռարձակողների ազատությանն ու անկախությանը:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքում սահմանված է «տեղեկատվության ազատություն», «տեղեկատվություն տնօրինող» տերմինները, որոնք միջազգայնորեն ընդունված ձևակերպումներ են: Տեղեկատվության ազատությունը տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և տեղեկատվությունը տնօրինողից ստանալու իրավունքի իրացումն է: Քանի որ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունն, ուստի Հանձնաժողովն իր տարեկան հաղորդումներում անդրադառնում է Հեռարձակողների ազատության և անկախության վիճակի վերաբերյալ տեղեկություններին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ 2023 թվականին իր կարգավորման ներքո գործող տեսալսողական ծառայություններ մատուցողները գործել են ազատ, վարել են իշխանություններից անկախ և ինքնուրույն խմբագրական և կադրային քաղաքականություն:



Այս տարվա հունվար ամսին կարգավորող մարմինը գրավոր դիմել էր լիցենզավորված և հեղինակազորված տեսալսողական ծառայություն մատուցող բոլոր ընկերություններին, ինչպես նաև ցանցային օպերատորներին հետևյալ հարցմամբ՝ «2023 թվականի ընթացքում եղե՞լ են խմբագրական և կադրային քաղաքականությանը միջամտելու, կարծիքների արտահայտման իրավունքը սահմանափակելու, հեռարձակողների բնականոն աշխատանքը խոչընդոտելու փորձեր, մասնավորապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական պաշտոնյաների, կուսակցությունների, քաղաքական, հասարակական կազմակերպությունների և այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից»: Հարցմանն ի պատասխան՝ Հեռարձակողների և ցանցային օպերատորների խմբագրական և կադրային քաղաքականությանը միջամտելու կամ միջամտելու փորձերի, կարծիքների արտահայտման իրավունքը սահմանափակելու, բնականոն աշխատանքը խոչընդոտելու վերաբերյալ Հանձնաժողովն էական նշանակություն ունեցող բողոքներ չի ստացել:

Այս համատեքստում ավելորդ չենք համարում հղում կատարել «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության կողմից յուրաքանչյուր տարի հրապարակվող Մամուլի ազատության համաշխարհային ցուցիչին:

Համաձայն այդ ցուցիչի (https://rsf.org/en/index)՝ Հայաստանի Հանրապետությունը 2023 թվականին՝ 2022 թվականի համեմատ 2, իսկ 2018 թվականի համեմատ՝ 31 կետով բարելավել է իր դիրքերը՝ 180 պետությունների շարքում զբաղեցնելով 49-րդ հորիզոնականը:

2023 թվականին Հանձնաժողովն, ինչպես և նախորդ չորս տարիների ընթացքում, իր լիազորությունների շրջանակներում պաշտպանել է Հեռարձակողների՝ ինքնուրույն խմբագրական քաղաքականություն վարելը, հանդես է եկել այդ իրավունքը հիմնավորող և պաշտպանող հայտարարություններով, միջնորդություններով և պարզաբանումներով, համագործակցել է տեսալսողական մեդիայի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Չնայած պետությունը շարունակում է բախվել է ապատեղեկատվության և ատելության խոսքի աննախադեպ դրսևորումների՝ այդուհանդերձ Հանձնաժողովը արձանագրում է, որ հանրային մուլտիպլեքսում գործող Հեռարձակողների եթերում երկու տարի շարունակ նկատելի է ատելության և անհանդուրժողականության խոսքի, վիրավորանքի, սպառնալիքների նվազում: Դրական միտումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ խոսքի ազատության չարաշահումների դեմ Հանձնաժողովի սկզբունքային պայքարով:

Սակայն Հեռարձակողների ազատության և անկախության վերաբերյալ միջազգային կազմակերպությունների, մեդիափորձագետների, Հանձաժողովի, ընդհանուր առմամբ, դրական գնահատականն ամենևին չի նշանակում, որ հեռարձակող լրատվամիջոցների համար ստեղծված են ազատ և անկախ գործելու բոլոր հնարավորությունները: Ոլորտի բնականոն գործունեությանը խոչընդոտում են մի շարք գործոններ, որոնց անդրադարձել էինք նախորդ երկու տարեկան հաղորդումներում: Անհրաժեշտ ենք համարում փաստել, որ այդ գործոնները շարունակում են բացասաբար ազդել տեսալսողական մեդիայի գործունեության և զարգացման վրա:

Նախորդ տարի այդ խոչընդոտներին ավելացել են ևս մի քանիսը, որոնցից երկուսի մասին Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում բարձրաձայնել:

1. 2021 թվականին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի լրացումը, որը Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններին առաջին անգամ էր գործում: Համաձայն լրացման՝ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք իրավունք ունի անվճար օգտվելու հանրային մուլտիպլեքսի՝ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 15 րոպե:

Վերոնշյալ նորմը, Հանձնաժողովի կարծիքով, ոտնահարում է լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող մասնավոր ընկերությունների իրավունքներն ու սահմանափակում է քաղաքական գովազդից եկամուտներ ստանալու հնարավորությունը: Կարգավորող մարմինը համոզված է, որ Օրենսդրի մտքով չի անցնի պարտադրել լիցենզավորված մասնավոր դեղատներին նախընտրական ժամանակահատվածում անվճար դեղամիջոցների որոշ խմբաքանակ տրամադրել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին: Ուստի, տրամաբանական չէ մասնավոր ընկերություններին պարտադրել այն նույն գործառույթը, որը կատարում է պետական բյուջեից ֆինանսավորվող հանրային հեռարձակողը: Այս համատեքստում մեկ անգամ ևս ցանկանում ենք հիշեցնել, որ լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների վրա օրենսդրությամբ արդեն իսկ դրված են բազմաթիվ պարտավորություններ, այդ թվում՝ պետական տուրքի, հեռարձակման վճարներ, մի շարք օրենսդրական պահանջների պահպանման պարտավորություններ, որոնք օրեցօր կրճատվող գովազդային եկամուտների և դիտելիության նվազման պայմաններում էլ ավելի են ազդում տեսալսողական մեդիայի զարգացման և բովանդակության որակի վրա:

2. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը (ՀՀՌՑ) հուլիս-օգոստոս ամիսներին պարտքերի կուտակման պատճառով պարբերաբար եթերազրկում էր հանրապետական և մայրաքաղաքային սփռում ունեցող մի շարք Հեռարձակողների: Կասկածի տակ չդնելով ՀՀՌՑ-ի իրավասությունը՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար, հրավիրում ենք խորհրդարանի ուշադրությունը հետևյալ փաստի վրա.

ՀՀՌՑ-ն հայտարարություն էր տարածել, որ Երևանի ավագանու ընտրությունների լուսաբանման ընթացքում լրատվական հիմնական թողարկումների և նախընտրական գովազդի ժամանակահատվածում եթերազրկումներ չեն իրականացվելու, սակայն պարբերական բնույթ կրող անջատումներն իրականացվել են նաև վճարովի եթերի տրամադրման ժամանակահատվածում:

Այսպես, «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրի հեռարձակումը դադարեցվել է 2023 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 09:28-ից մինչև 15:00-ն, ի հեճուկս այն փաստի, որ ընկերությունն օրվա ընթացքում նախընտրական քարոզչության համար տրամադրվող վճարովի ժամանակահատված էր հայտարարել ժամը 06:00-ից մինչև 23:59-ը: Նույն օրը դադարեցվել էր նաև «Ա-ԹԻՎԻ» ծրագրի հեռարձակումը՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ն, թեպետ վճարովի եթերի տրամադրման ժամանակահատված էր սահմանվել ժամը 15:00-ից մինչև 20:00-ն: «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ծրագրի հեռարձակումը հանրային մուլտիպլեքսում ևս դադարեցվել էր՝ 2023 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 12:01-ից մինչև 15:30-ն և 16:00-ից մինչև 18:30-ը: Նշված ծրագրի վճարովի եթերաժամի տրամադրման ժամանակահատված էր հայտարարվել ժամը 10:00-ից մինչև 23:55-ը:

Հանրային մուլտիպլեքսում «ՇԱՆԹ», «Ա-ԹԻՎԻ» և «ՖՐԻ ՆՅՈՒԶ» տեսալսողական ծրագրերի հեռարձակումը դադարեցվել է նաև 2023 թվականի սեպտեմբերի 4-ին, «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրինը՝ ժամը 08:00-ից մինչև 16:00-ն, «Ա-ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրինը՝ ժամը 07:00-ից մինչև 11:00-ն, 12:00-ից մինչև 14:00-ն, 15:00-ից մինչև 17:00-ն, իսկ «ՖՐԻ ՆՅՈՒԶ» տեսալսողական ծրագրինը՝ ժամը 10:06-ից մինչև 13:05-ն և 13:20-ից մինչև 17:25-ն:

Վերոնշյալ տեսալսողական ծրագրերի հեռարձակումը դադարեցվել է նաև 2023 թվականի սեպտեմբերի 11-ին, «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրինը՝ ժամը 07:00-ից մինչև 16:00-ն, «Ա-ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրինը՝ ժամը 06:00-ից մինչև 11:00-ն, 12:00-ից մինչև 14:00-ն և 15:00-ից մինչև 17:00-ն, իսկ «ՖՐԻ ՆՅՈՒԶ» տեսալսողական ծրագրինը՝ ժամը 06:40-ից մինչև 09:40-ն, 13:30-ից մինչև 18:15-ն և 21:15-ից մինչև 22:30-ն:

Հանձնաժողովի կարծիքով՝ եթերի այդպիսի անկանոն անջատումները սահմանափակում են ՀՀ քաղաքացու իրավունքը՝ ծանոթանալու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի քարոզչական նյութերին, ինչպես նաև նվազեցնում են քաղաքական գովազդից առաջացող Հեռարձակողների եկամուտները:

Եզրափակելով վերոշարադրվածը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողների գործունեությանը իշխանությունների միջամտության բացակայությունն ամենևին չի նշանակում, որ Հայաստանում ձևավորված է տեսալսողական ծառայություններ մատուցողների անկախ և ինքնուրույն էկոհամակարգ: Մի շարք ընկերությունների իրական կամ ստվերային հիմնադիրները, սեփականատերերը միջամտում են այդ ընկերությունների խմբագրական և կադրային քաղաքականությանը, քաղաքական պատվերներ են իջեցնում խմբագրակազմին: Հիմնադիրներից և սեփականատերերից, քաղաքական ուժերից ֆինանսական կախվածությունը սահմանափակում է Հեռարձակողների խմբագրական անկախությունը, նպաստում քարոզչական բովանդակության ավելացմանը, տեղեկատվության մատուցման կողմնակալությանը:

3. Հանձնաժողովի անկախ, թափանցիկ և հաշվետու գործունեություն

«Կարգավորող պետական մարմինը, կարգավորող պետական մարմնի անդամները և կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Չի թույլատրվում անօրինական ազդեցություն և միջամտություն նրանց գործունեությանը» ***(«Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 32-րդ հոդված, 9-րդ մաս):***

Կարգավորող մարմնի իրական անկախությունը, գործունեության թափանցիկությունը երբեմն կասկածի տակ են դնում որոշ հանրային գործիչներ և լրատվամիջոցներ: Մինչև 2018 թվականն, իսկապես, Հանձնաժողովի գործունեությունը գտնվել է իշխանության վերին օղակների հսկողության ներքո: Հատկապես լիցենզավորման գործընթացի հետ առնչվող որոշումներն ընդունվել են մեծամասամբ կարգավորող մարմնից դուրս, լիցենզավորումն եղել է քաղաքական ճնշման կամ խրախուսման լծակ:

Վերջին տարիներին այդ իրավիճակը փոխվել է, և Հանձնաժողովը գործում է միմիայն ՀՀ Սահմանադրության և օրենսդրության համապատասխան: 2023 թվականին ևս որոշումները կայացրել է ինքնուրույն, առանց արտաքին միջամտության և ազդեցության՝ հենվելով կոլեգիալության սկզբունքի վրա: Գործադիր, օրենսդիր, հանրային իշխանության, տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչները, քաղաքական ուժերը չեն ուղղորդել կարգավորող մարմնի աշխատանքները, չեն միջամտել կադրային քաղաքականությանը: Հանձնաժողովը պատասխանատվություն է կրել իր կայացրած բոլոր որոշումների համար:

Հանձնաժողովի որոշումների անաչառությունը և արհեստավարժությունը կասկածի տակ դնելը, իշխանությունների կողմից իջեցված «քաղաքական պատվերի» կատարման մեջ մեղադրանքները մերկապարանոց են, ունեն քաղաքական շահարկման և Հանձնաժողովի հանդեպ վստահությունը խաթարելու նպատակ: Հատկապես, որ այդ մեղադրանքները հիմնավորող որևէ փաստ կամ վկայություն ոչ ոք չի ներկայացրել և չէր էլ կարող ներկայացնել:

Օրենսդրության համաձայն՝ Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք անցկացվում են դռնբաց (բացառությամբ գաղտնիություն պարունակող և հրապարակման ոչ ենթակա հարցերի): 2023 թվականին Հանձնաժողովը գումարել է 36 նիստ: Բոլոր նիստերը տեսաձայնագրվել են և արխիվացվել: Հաճախ, կախված հարցի կարևորությունից և հանրային հետաքրքրությունից, նիստերն ուղիղ հեռարձակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան և յութուբյան էջերում:

Գծապատկեր 1. 2019-2023 թվականներին Հանձնաժողովի կողմից գումարած նիստերի համեմատական պատկերը.



2023 թվականին Հանձնաժողովի պաշտոնական կայքէջը՝ (www.tvradio.am), ֆեյսբուքյան էջը՝ (https://www.facebook.com/tvradio.Armenia/) գործել են անխափան, պատշաճ և ժամանակին ներկայացրել Հանձնաժողովի աշխատանքները, ընդունված որոշումները, ապահովել հետադարձ կապը քաղաքացիների հետ:

Ինչպես և նախորդ տարիներին, Հանձնաժողովը կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, դասընթացներ (այդ թվում՝ առցանց) լիցենզավորված և հեղինակազորված Հեռարձակողների, ցանցային օպերատորների, դիստրիբյուտորների ներկայացուցիչների մասնակցությամբ: Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել մարզային, մայրաքաղաքային և հանրապետական սփռում ունեցող հեռուստառադիոընկերությունների ղեկավարների հետ:

Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով կազմակերպվել և անցկացվել են ճեպազրույցներ, հարցազրույցներ: Հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստվել են մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ: Մասնավորապես՝ Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակվել է մամուլի 82 հաղորդագրություն և 9 հայտարարություն: Տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներում հրապարակվել են Հանձնաժողովի նախագահի, անդամների, անձնակազմի աշխատակիցների հետ անցկացված հարցազրույցներ, վերլուծական հոդվածներ, մեդիաշուկայի վերլուծության վերաբերյալ շուրջ 1675 նյութ:

Հեռարձակող կազմակերպությունների և մեդիամասնագետների համար Հանձնաժողովը պարբերաբար պատրաստել և հրապարակել է մեդիաշուկայի հետազոտության արդյունքների վերաբերյալ տեղեկատվական նյութեր, վերլուծական հոդվածներ, գծապատկերներ, մշտադիտարկման արդյունքների ամփոփագրեր և այլն:

Հանձնաժողովը իր աշխատանքները իրականացրել է թափանցիկության, անկախության և հաշվետվողականության շրջանակներում: Մեր գործունեությունը նաև միտված է կանխատեսելու և ձևակերպելու անընդհատ փոփոխվող մեդիադաշտի նորանոր մարտահրավերների ծագումն ու հետևանքները՝ նպատակ ունենալով աջակցել լրատվամիջոցներին՝ ստեղծելու ավելի որակյալ և արժանահավատ բովանդակություն ու բարձրացնելու լսարանի վստահությունը լրատվամիջոցների հանդեպ:

4. Տեսալսողական մեդիաոլորտը կարգավորող օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

2020 թվականի օգոստոսի 7-ին ուժի մեջ մտած «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը դրական ազդեցություն ունեցավ տեսալսողական մեդիայի ոլորտի գործունեության կարգավորման վրա: Այն տեսալսողական ծառայություններ մատուցող լիցենզավորված ընկերությունների համար համաչափ ու համապատասխան իրավունքների և պարտականությունների համակարգ է սահմանել՝ առանց ավելորդ կամ անհամաչափ սահմանափակումների: Դյուրացվեց նաև մեդիամատուցող նոր ընկերությունների մուտքը շուկա: Սակայն պետք է ևս մեկ անգամ փաստենք, որ տեսալսողական մեդիաոլորտի ազատականացմանը զուգահեռ՝ Օրենքի դրույթների և դրանք գործնականում կիրառելու արդյունքում, Հանձնաժողովի համար ի հայտ են գալիս բազմաթիվ նոր խնդիրներ:

2021 և 2022 թվականների տարեկան հաղորդումներում անդրադարձել ենք մի շարք հրատապ լուծում պահանջող խնդիրներին, որոնք, ցավոք, ոչ միայն լուծում չեն ստացել, այլ նույնիսկ չեն արժանացել պատշաճ ուշադրության և քննարկման: Տեխնոլոգիաների զարգացման և համացանցի հասանելիության աճի հետ մեկտեղ ոչ միայն տեսալսողական մեդիան, այլ նաև պետությունն ու հասարակությունը բախվում են նորանոր մարտահրավերների:

Հրատապ լուծում պահանջող խնդիրներից մեկը՝ տեսալսողական մեդիայի կարգավորման ազատականացումը, ողջունելի է, սակայն ՀՀ տեղեկատվական անվտանգության համար վտանգներ է պարունակում: Հայաստանի հանրային մուլտիպլեքսով հեռարձակվող և մալուխային ցանցերով տարածվող օտարերկրյա տեսալսողական ծրագրերը հաճախ սպառողներին պարտադրում են մեր հանրային և պետական շահերի հետ չհամընկնող տեղեկատվական օրակարգեր, որոնց դեմ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար Հանձնաժողովն օրենսդրութամբ նախատեսված կարգավորման գործիքակազմ չունի:

Եվս մեկ հրատապ լուծում պահանջող խնդիր. լիակատար կարգավորման ենթակա են միայն հանրային մուլտիպլեքսում տեսալսողական մեդիածառայություններ մատուցողները, ինչն անհավասար մրցակցային դաշտ է ստեղծում: Ցանցային օպերատորների փաթեթներում ընդգրկված հեռուստածրագրերն ենթարկվում են նվազագույն կարգավորման, իսկ համացանցում հեռարձակվող լրատվամիջոցներն որևէ կերպ ներառված չեն օրենքով սահմանված պարտականություններ ունեցողների ցանկում, նրանց բովանդակության կարգավորումը բարդ է կամ անհնարին: Տեսալսողական մեդիածառայությունների վերաբերյալ օրենքի շրջանակներում պետք է կարգավորվեն տեսալսողական հաղորդակցության այն բոլոր տեսակները, որոնք գտնվում են ծառայություն մատուցողի, խմբագրական անձնակազմի պատասխանատվության ներքո: Սա ներառում է ոչ միայն տեսալսողական և լսողական ծրագրեր հեռարձակողներին, այլ նաև՝ ըստ պահանջի ծառայությունները (անկախ նրանից, թե ինչ հատուկ տեխնոլոգիա և հարթակ է օգտագործվել դրանք բաշխելու համար):

Ավելորդ համարելով ևս մեկ անգամ անդրադառնալ բոլոր խնդիրներին և մարտահրավերներին՝ Հանձնաժողովն այն կարծիքին է, որ անհրաժեշտ է նախաձեռնել հեռարձակող մեդիաների ոլորտին վերաբերող պետական նոր ռազմավարության մշակման և իրագործման գործընթաց, որի կարևորագույն բաղադրիչը համապատասխան օրենսդրական փոփոխություններն են:

5. Տեսալսողական մեդիայի ոլորտում գործող ընկերություններ

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել է 113 լիցենզավորված ընկերություն՝

- 22 տեսալսողական մեդիածառայություն մատուցող,
- 29 լսողական մեդիածառայություն մատուցող,
- 62 ցանցային օպերատոր:

Հեղինակազորվել է 55 ընկերություն, որոնցից 30-ը լիցենզավորվել են:

Գծապատկեր 2. Տեսալսողական մեդիայի ոլորտում գործող ընկերություններ

Օրենքի համաձայն՝ առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվել է Հանրային հեռարձակողի՝

- 2 տեսալսողական ծրագիր,
- 4 լսողական ծրագիր,

իսկ միջպետական և միջկառավարական պայմանագրերի հիման վրա՝

- 4 տեսալսողական ծրագիր,
- 2 լսողական ծրագիր:

Գծապատկեր 3. Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնողներ



Հանրային հեռարձակողներ

- Տեսալսողական
- Լսողական



Օտարերկրյա տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ

- Տեսալսողական
- Լսողական

5.1 Հեղինակազորման գործընթաց

«Հեղինակազորումը կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տվող փաստաթղթի տրամադրումն է» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 23-րդ կետ):

Հեղինակազորման փաստաթուղթը՝ վկայագիրը, Հանձնաժողովի կողմից տրամադրվում է պարզեցված ընթացակարգով և անժամկետ: Հեղինակազորումն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հնարավորություն է տալիս առանց լիցենզիայի մատուցել տեսալսողական մեդիածառայություններ՝ ցանցային օպերատորի, իսկ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի հիմնադրման դեպքում՝ նաև մասնավոր մուլտիպլեքս օպերատորի միջոցով:

Հեղինակազորումն Օրենքով կարգավորվել և սկսել է գործել 2020 թվականի օգոստոսի 7-ին՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Օրենքի կիրառման ընթացքում ի հայտ եկած որոշ խնդիրներ վերացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2023 թվականին շրջանառության մեջ է դրվել ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը: Կարծում ենք՝ նախագծով հեղինակազորման գործընթացի կարգավորման նոր դրույթների կիրառման արդյունքում կվերանան այն խնդիրները, ինչը հանգեցնում է մեդիաոլորտի ոչ լիարժեք վերահսկողությանը:

2023 թվականին Հանձնաժողովի կողմից հեղինակազորվել է 2 իրավաբանական անձ, անվան փոփոխման հիմքով՝ փոփոխություն է կատարվել 3 հեղինակազորման վկայագրում, դիմումի համաձայն դադարեցվել է 6 հեղինակազորման վկայագրի գործողությունը:

2023 թվականին տրամադրված հեղինակազորման վկայագրեր
(իրավաբանական անձի անվանումը, տրման ամսաթիվ)

«ԼԱՎ ՌԱԴԻՈ» ՍՊԸ, 26.01.2023 թ.

«ՄԵԴԻԱ ՄԱՐՍԵՏ» ՍՊԸ, 26.01.2023 թ.

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հեղինակազորված ընկերությունների տեսալսողական ծրագրերի ընդհանուր թիվը 109 է, որոնց մի մասը հեռարձակվում է հանրային մուլտիպլեքսում, իսկ մյուս մասը վերահաղորդվում է ցանցային օպերատորների կողմից (*Տես՝ Հավելված 2*):

2023 թվականին դադարեցված հեղինակազորման վկայագրեր
(իրավաբանական անձի անվանումը, դադարեցման ամսաթիվ)

«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ, 17.04.2023 թ.

«ՅԱՆ ԹԻՎԻ» ՍՊԸ, 17.04.2023 թ.

«ՖԱԿՏՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ, 22.06.2023 թ.

«ԱՆՅՈՒՋ» ՓԲԸ, 21.07.2023 թ.

«ՍՎԳ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ, 21.07.2023 թ.

«ՏԻՆՍ» ՍՊԸ, 26.10.2023 թ.

5.2 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

2023 թվականին լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող 22 ընկերություն հեռարձակում է իրականացրել հանրային մուլտիպլեքս ցանցում՝ 5-ը հանրապետական, 7-ը մայրաքաղաքային և 10-ը մարզային սփռման:

Գծապատկեր 4. Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ

Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

«ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ

«ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

«Ա-ԹԻՎԻ» ծրագիր
«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ

«ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ

«ՖԱՍԹՍՊՈՐՏ» ծրագիր
«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Մայրաքաղաքային սփոում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր
«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ

«21 ԹԻՎԻ» ծրագիր
«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ծրագիր
«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ

«:ԲՈՒՆ ԹԻՎԻ» ծրագիր
«:ԲՈՒՆ» գիտամշակութային հիմնադրամ

«5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիր
«ՇԱՐԿ» ՍՊԸ

«ՆՈՒՌ» ծրագիր
«Ա ՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Մարզային սփոում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

Արագածոտնի մարզ
«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ծրագիր
«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ

Արարատի մարզ
«ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ» ծրագիր
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

Շիրակի մարզ
«ՑԱՅԳ» ծրագիր
«ՑԱՅԳ» ՍՊԸ

Լոռու մարզ
«ՖՈՐՏՈՒՆԱ» ծրագիր
«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ
«ՍՅՈՒՆԻՔ ՏՎ» ծրագիր
«ՁԱԳԵՁՈՐ»
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ

Արմավիրի մարզ
«ԱՐՄԱ ԹԻ-ՎԻ» ծրագիր
«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ
«ԳԵՂԱՄԱ» ծրագիր
«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ

Կոտայքի մարզ
«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ծրագիր
«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ՍՊԸ

Սյունիքի մարզ
«ՍՅՈՒՆԻՔ ՏՎ» ծրագիր
«ՁԱԳԵՁՈՐ»
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ

Տավուշի մարզ
«ՏԱՎՈՒՇ ՏՎ» ծրագիր
«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

5.3 Հանրային մուլտիպլեքս ցանցի խնդիրների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում հանրային և միակ թվային մուլտիպլեքսն ամբողջապես չի արտացոլում պետության և հասարակության սոցիալական պատկերը: Մինչդեռ մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրեր հեռարձակող ընկերությունները/ծրագրերը պետք է լինեն մեր պետության խնդիրներին, մարտահրավերներին առնչվող տեղեկատվական հոսքերի կառավարիչը, պետության ու ժողովրդի հոգևոր, մշակութային, լեզվական, կրթական, գաղափարաբանական ուղեկիցն ու իրազեկողը, միջազգային հարթակներում Հայաստանի տեղեկատվական ներկայացուցիչը (առնվազն ամբողջական պատկեր փոխանցող հողումների տեսքով), և, ի վերջո, մեր պետության տեղեկատվական և լեզվական անվտանգության երաշխավորներից մեկը: Հենց այդպիսի առաքելությամբ են գործում ժողովրդավարական երկրների հանրային մուլտիպլեքսում հեռարձակվող հեռուստածրագրերը:

Տեղեկատվական դաշտում հասունացել է պետական նոր ռազմավարության մշակման պահանջ, որպեսզի հնարավոր լինի հետևողական քայլերով կանխել ճգնաժամի առաջացումը: Հանրային մուլտիպլեքսում ճգնաժամն ակնառու է, եթե հիմա քայլեր չձեռնարկենք, այն պարզապես կդադարի լինել պետական հսկողության ներքո գործող ու հանրային գործառույթ կատարող հարթակ:

Ճգնաժամային իրավիճակի հիմնական պատճառներն են՝

Դիտելիության նվազում
Գովազդային մուտքերի կտրուկ անկում
Օրենսդրական փոփոխություններ
Կարգավորման անհամաչափ մեխանիզմներ
Մրցակցության անհավասար պայմաններ համացանցում
տեսալսողական ծառայություն մատուցողների հետ:

Պետությունը, բազմաթիվ պահանջներ, սահմանափակումներ, արգելքներ, պարտավորություններ սահմանելով հանրային մուլտիպլեքսում հեռարձակվողների համար, չի առաջարկում այնպիսի լուծումներ, որոնք գրավիչ ու հեռանկարային կդարձնեն մուլտիպլեքսի սլոթն օգտագործողի համար հանրօգուտ բովանդակություն պատրաստելն ու հեռարձակելը:

Հասունացել է հրատապ անհրաժեշտություն ձևակերպելու հանրային մուլտիպլեքսի հայեցակարգը՝ ուշադրության կենտրոնում պահելով ապագա բացասական զարգացումները, որոնց ահազանգերն արդեն իսկ ակնառու էին համավարակային և հետպատերազմական ժամանակահատվածից:

Հանձնաժողովը կանխատեսում է, որ հաջորդ մրցույթում (2027 թ.) կարող են թափուր մնալ սլոթեր, որոնք կզբաղեցնեն քարոզչական ուղղվածություն ունեցող հեռուստաընկերություններ՝ առաջարկելով պառակտիչ քաղաքական օրակարգ: Կամ ի հայտ կգան ակնհայտ թույլ հավակնորդներ, որոնք ունակ չեն լինի կատարելու ստանձնած պարտավորություններն ու չեն համապատասխանի հանրային մուլտիպլեքսի առաքելությանը: Չի կարելի բացառել, որ հեռուստաընկերությունները, ֆինանսական ծանր վիճակից ելնելով, գնորդ փնտրեն Հայաստանից դուրս: Այդ դեպքում հանրային մուլտիպլեքսում կհայտնվեն հեռարձակողներ, որոնց թիկունքում մեծ հավանականությամբ կկանգնեն այլ պետությունների շահեր պաշտպանողներ՝ պարտադրելով Հայաստանի քաղաքացիներին օտար տեղեկատվական օրակարգ:

Հարկ ենք համարում նաև նշել, որ հանրային մուլտիպլեսքի թուլացումը կհանգեցնի համացանցային կամ մալուխային հեռարձակում ունեցող հարթակների դիտելիության աճին: Իսկ այդ մեդիա հարթակների բովանդակության նկատմամբ կարգավորող մարմինը կամ չունի կարգավորիչ գործառույթներ, կամ դրանք խիստ սահմանափակ են: Եթե չմիջամտենք առաջացած ճգնաժամային իրավիճակին, հանրային մուլտիպլեքսը շատ արագ կկորցնի իր դերն ու նշանակությունը, իսկ առաջացած դատարկ տարածքում կձևավորվեն ու կտեղավորվեն ապատեղեկատվություն, ատելության խոսք, անորակ բովանդակություն, deepfake սփոռող ու այլ պետությունների քաղաքական շահերն առաջ տանող զանգվածային տեղեկատվական միջոցներ:

Համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետության համար հույժ կարևոր է, որպեսզի հանրային մուլտիպլեքսը դառնա բարդ իրականությանը արձագանքող, արդիական իմաստ գեներացնող ու թելադրող, գիտելիքներ ու արժեքներ տարածող, քաղաքացիների իրավունքների պաշտպանի գործառույթ կատարող հարթակ:

Այս հարցում պետությունը պետք է օժանդակի մուլտիպլեքսում հեռարձակվող ընկերություններին: Անկախ տեսալսողական ծրագրերի ժանրից, բնույթից ու թեմայից հանրային մուլտիպլեքսում ընդգրկված լրատվամիջոցները պետք է զգան պետության հոգածությունն ու աջակցությունը, քանի որ այսօր (և հատկապես վաղը) ունակ չեն լինի միայնակ դիմակայելու մարտահրավերներին:

Ելնելով վերաշարադրվածից՝
Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում.

1. Մշակել հանրային մուլտիպլեքսի հայեցակարգ, որը կարտացոլի ինքնիշխան հանրօգուտ հարթակի բանաձևը: Կձևակերպի սահմանափակ պետական ռեսուրսի (սլոթերի և հաճախականությունների) օգտագործման պետական ռազմավարությունը:

2. Դիտարկել մուլտիպլեքսի սլոթերի քանակի կրճատման հնարավորությունը՝ տեսալսողական պատկերի որակի բարձրացմանը զուգահեռ (փոխկապակցված խնդիրներ են):

3. Ստեղծել աջակցման հիմնադրամ, որի առանցքային գաղափարը կլինի խրախուսման ու հեռանկարային քայլերի հաջորդականությունը, ինչի արդյունքում կբարձրանա հանրային մուլտիպլեքսի կշիռն ու գրավչությունը, կտրուկ կավելանա հանրօգուտ բովանդակության ծավալը:

4. Կիրառել խրախուսման, աջակցության այլ մեխանիզմներ՝ իրականացնելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

5. Նպատակ դնել կարգավորելու համացանցային ու մալուխային հեռարձակումը:

6. Ընդլայնել և արդիականացնել Հանձնաժողովի լիազորություններն ու գործառույթները, որոնք այժմ բավարար չեն՝ արձագանքելու ներկա մարտահրավերներին ու վերահսկողության տակ պահելու տեղեկատվական հոսքերը:

5.4 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

2023 թվականին լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցող 29 ընկերությունից 3-ը գործել է Հայաստանի Հանրապետության, 16-ը՝ Երևան քաղաքի և 10-ը՝ մեկ մարզի տարածքում:

Գծապատկեր 5. Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ



Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

«ՌԱԴԻՈ ՋԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՊՌՈ»ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ԵՐԵՎԱՆ» ծրագիր
«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ

Երևան քաղաքում սփոում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ծրագիր
«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ

«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ծրագիր
«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ

«ԳՈՐԾԱՐԱՐ ԱԼԻՔ ՖՄ 106.5» ծրագիր
«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ

«ՖՄ-105.5» ծրագիր
«ՖՄ-105.5» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՋԱԶ ՖՄ» ծրագիր
«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ

«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ծրագիր
«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ

«ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ծրագիր
«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ծրագիր
«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ՓՈՓ ԷՖ ԷՄ» ծրագիր
«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ

«ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

«ԹՈՒ. ՍՊՈՐՏ» ծրագիր
«ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊԸ

«ԷՖ ԷՄ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

«ԶԱՐԿ ՖՄ» ծրագիր
«ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

Արարատի մարզ

«ԱՐԱՐԱՏ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

Շիրակի մարզ

«ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» ծրագիր
ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ

Լոռու մարզ

«ՄԻԳ» ծրագիր
«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ

Սյունիքի մարզ

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Տավուշի մարզ

«ՏԱՎՈՒՇ ԷՖԷՄ» ծրագիր
«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ

ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ» ծրագիր *«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ*

5.5 Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

Օրենքի համաձայն՝ առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականին հեռարձակում են իրականացրել Հանրային հեռարձակողները, միջպետական և միջկառավարական պայմանագրերի հիման վրա հեռարձակողները:

Հանրային հեռարձակողներ

2023 թվականին Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվել են Հանրային հեռարձակողի 2 տեսալսողական՝ հանրապետական սփռման «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Շողակաթ», ինչպես նաև 4 լսողական՝ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի հանրապետական սփռման «Առաջին ծրագիր» և մայրաքաղաքային սփռման «Իմ ռադիո», «ՎԷՄ» կրթական-մշակութային և «Արևիկ» ծրագրերը:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՎԷՄ» կրթական-մշակութային ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՇՈՂԱԿԱԹ» ծրագիր
«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՐԵՎԻԿ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԻՄ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

Օտարերկրյա տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ

2021 թվականից հանրային մուլտիպլեքսում օտարերկրյա տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացվում է առանց լիցենզիայի՝ միջպետական և միջկառավարական պայմանագրերի հիման վրա:

Համաձայն ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև 2020 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված «Զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հեռարձակվում են հանրապետական սփռման 1 տեսալսողական՝ «ՌՏՌ-Պլանետա» և մայրաքաղաքային սփռման 2 տեսալսողական՝ «Ռոսիյա-Կ», «Առաջին ալիք. Համաշխարհային ցանց» հեռուստածրագրերը:

Ըստ Համաձայնագրի, Հանձնաժողովն իրականացրել և իրականացնում է հանրային մուլտիպլեքսում ռուսաստանյան հեռուստածրագրերի գործունեության մշտադիտարկում՝ Համաձայնագրի 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված պահանջների խախտման փաստերն արձանագրելու նպատակով, որի արդյունքները տրամադրվում են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը՝ քննարկման և հետագա գործողություններ իրականացնելու համար:

«ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» ծրագիր

«ՌՈՍԻՅԱ-Կ» ծրագիր

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ» ծրագիր

Միջպետական պայմանագրերի հիման վրա հեռարձակվում են նաև մայրաքաղաքային սփռման «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» տեսալսողական ծրագիրը (ռուսերեն) և «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» (ռուսերեն) և «Էղ Էֆ Ի» (RFI) (Ֆրանսիա, ֆրանսերեն) լսողական ծրագրերը:

«ՄԻՐ» ծրագիր
«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«ՄԻՐ» լսողական ծրագիր
«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«RFI» ռադիոծրագիր
Ֆրանսիայի միջազգային ռադիո

5.6 Մալուխային կամ այլ ցանց օգտագործող ցանցային օպերատորներ

«Ցանցային օպերատորը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 5-րդ կետ):



Գծապատկեր 6. Մալուխային ցանցերում տարածվող տեսալսողական ծրագրերն ըստ արտադրության երկրի

Ցանցային օպերատորները՝ տեսալսողական տեղեկատվություն տարածողները, միայն ազդանշանն օգտատերերին հասցնողներն են և տեսալսողական արտադրանքի բովանդակության համար պատասխանատվություն չեն կրում:

Օրենքով նվազեցվել է ցանցային օպերատորների լիցենզավորման հետ կապված վարչարարությունը. ցանցային օպերատորի գործունեության լիցենզիան տրամադրվում է առանց մրցույթի՝ պարզեցված ընթացակարգով:

Տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնող 62 ցանցային օպերատորից 11-ը գործել է Հայաստանի Հանրապետության, 10-ը՝ Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 6-ը՝ Երևան քաղաքի, 2-ը՝ մեկից ավելի մարզերի և 33-ը՝ մեկ մարզի տարածքում (*Տես՝ Հավելված 3*):

2023 թվականին Հանձնաժողովի կողմից տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 3 լիցենզիա:

Գծապատկեր 7. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի թեմատիկ ուղղվածությունը

69 ԺԱՄԱՆՑԱՅԻՆ	**55** ԿԻՆՈ ԵՎ ՍԵՐԻԱԼ	**43** ԸՆԴՀԱՆՈՒՐ
35 ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ	**27** ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**26** ՄԱՆԿԱԿԱՆ
24 ՀՈԲԲԻ	**17** ՄԱՐԶԱԿԱՆ	**17** ԱՅԼ

Գծապատկեր 8. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի հեռարձակման լեզուն



Գծապատկեր 9. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի հեռարձակման լեզվի՝ 2019-2023 թվականների համեմատական պատկերը



5.7 Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեություն

«Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձն է» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 10-րդ կետ):

Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները Հանձնաժողովի կարգավորման ներքո են գտնվում 2020 թվականի օգոստոսի 7-ին Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի գործունեություն է իրականացնում 8 ընկերություն: Նշենք, որ Օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծով նոր կարգավորումներ են սահմանվել նաև այս գործառույթի հետ կապված խնդիրները նվազագույնի հասցնելու համար, ինչը կնպաստի դիստրիբյուտորների գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

2023 թվականի ընթացքում, Օրենքով Հանձնաժողովին վերապահված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել են տեսալսողական ծրագրերի իրավատերերի հետ կնքված 23 պայմանագիր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր, որի արդյունքում հաստատվել է 29 տեսալսողական ծրագրի վերաբերյալ 6 ծանուցում:

6. Լիցենզավորման գործընթաց

6.1 Մրցույթներ

Հանրային մուլտիպլեքսում տեսալսողական և լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորումն իրականացվում է մրցութային ընթացակարգով՝ Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ սահմանված կարգով:

2023 թվականին հայտարարվել և անցկացվել է լիցենզավորման 2 մրցույթ, ինչը պայմանավորված էր հանրային մուլտիպլեքսում ազատ սլոթի առաջացմամբ[1] և մարզում լսողական ծրագրի հեռարձակման համար նոր հաճախականության առկայությամբ:

Նշենք, որ մրցույթների ամբողջ գործընթացը կազմակերպվել է պատշաճ, մրցույթին մասնակցող ընկերությունների համար ապահովվել են հավասար պայմաններ, մրցույթի արդյունքները հիմնավորվել են, որի հիմքում եղել են օբյեկտիվ, անկողմնակալ գնահատականներ:

Օրենքով սահմանված կարգավորումների համաձայն՝ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթ հայտարարվում է ազատ հաճախականությունների առկայության դեպքում, սակայն մինչ օրս ազատ հաճախականություն չլինելու պատճառով լիցենզավորման մրցույթ չի հայտարարվում:

Տեսալսողական ծրագրերի հանրապետական սփռում

Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ և «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունները:

Նշենք, որ 2021 թվականից հանրային մուլտիպլեքսում հեռարձակում իրականացնող «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերությունը 2022 թվականին անցկացված մրցույթի արդյունքում հաղթող չէր ճանաչվել և հանրային մուլտիպլեքսում հեռարձակում չէր իրականացնում: Սակայն 2023 թվականի մարտին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում (2023 թվականի մարտի 22-ին ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-124-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2023 թվականի ապրիլի 18-ին)՝ «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերությունն իր դիմումի համաձայն նույն պայմաններով 2023 թվականի հուլիսից շարունակել է հանրային մուլտիպլեքսում իրականացնել հեռարձակում, մինչև օրենքով սահմանված կարգով սլոթի համար նոր մրցույթի արդյունքների ամփոփումը և լիցենզիայի տրամադրումը:

Վարկանիշային քվեարկության արդյունքում հաղթող է ճանաչվել «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը: «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերությունը թեև հաղթող չի ճանաչվել և հանրային մուլտիպլեքսում հեռարձակում չի իրականացնում, սակայն որպես հեղինակազրկված ընկերություն՝ իր «Երկիր մեդիա» տեսալսողական ծրագիրը հեռարձակում է ցանցային օպերատորների միջոցով:

[1]ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ որպես հայցի ապահովման միջոց՝
արգելվել է Հանձնաժողովին հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման 1 սլոթի համալրմանն ուղղված մրցույթ իրականացնել՝ մինչև վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Միաժամանակ, 2022 թվականի սեպտեմբերի 1-ին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից կայացվել է «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 2023 թվականի մարտի 17-ի վճռով վերացվել է՝ 2022 թվականին կիրառված՝ հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփռման մեկ սլոթի համալրմանն ուղղված մրցույթ իրականացնելու արգելանքը, ինչպես նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության 2023 թվականի մայիսի 29-ի որոշմամբ կիրառված սահմանափակումը:

Լսողական ծրագրերի մարզային սփռում

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից 2022 թվականի դեկտեմբերին Հանձնաժողով է ներկայացվել տեղեկատվություն՝ ՀՀ Տավուշի մարզի տարածքում ազատ հաճախականության առկայության վերաբերյալ, որի հիմքով 2023 թվականին անցկացվել է 2022 թվականի դեկտեմբերին հայտարարված լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթ: Արդյունքում, տրամադրվել է լսողական ծրագրի հաճախականության օգտագործման մարզային սփռման 1 լիցենզիա:

2021-2023 թվականներին անցկացված մրցույթների արդյունքում ավելացել է լսողական մեդիածառայություն մատուցողների թիվը: Պատճառը նոր հաճախականությունների առկայությունն է, երբ մասնավոր լսողական մեդիածառայություն մատուցողների համար հանվեց մրցույթով հաճախականությունների տրամադրման օրենսդրական սահմանափակումը:

Օրենսդրական այս կարգավորումը հնարավորություն ընձեռեց, որպեսզի լսողական մեդիածառայություն մատուցողների գործունեությունն ընդլայնվի նաև մարզերում, ինչը նախկին օրենսդրական կարգավորումներով սահմանափակված էր: Տարիներ շարունակ մի շարք մարզեր զրկված են եղել մարզային լսողական ծրագրեր ունկնդրելու հնարավորությունից: Հանձնաժողովը գոհունակությամբ արձանագրում է, որ ներկայումս ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի, Արագածոտնի և Տավուշի մարզերում առաջին անգամ հեռարձակվում են մարզային լսողական ծրագրեր, Լոռու և Շիրակի մարզերում հեռարձակվող լսողական ծրագրերին ավելացել են ևս մեկական լսողական ծրագրեր: Հայաստանի Հանրապետության 8 մարզերում հեռարձակվող լսողական ծրագրերը մարզերի բնակչության համար իրազեկման, տեղական նորությունների, մշակութային, կրթական, ժամանցային, երաժշտական հաղորդումների տարածման միջոց են: Կարևոր ենք համարում հատկապես սահմանամերձ մարզերում լսողական մեդիածառայություն մատուցողների գործունեությունը:

Արձանագրենք նաև, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ Արմավիրի և Կոտայքի մարզերում ազատ հաճախականություններ առկա չեն:

2023 թվականի լիցենզավորման, լիցենզիայի գործողության դադարեցման ցուցանիշներ

Ցանցային օպերատորի գործունեության ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ	1
Տեսալսողական ծրագրի հեռարձակման ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ	1
Լսողական ծրագրի հեռարձակման ՄԱՐԶԱՅԻՆ	1
Ցանցային օպերատորի գործունեության ՄԱՐԶԱՅԻՆ	2

Գծապատկեր 10. 2023 թվականին տրամադրված լիցենզիաներ

Հանձնաժողովի կողմից անցկացված մրցույթների արդյունքում 2023 թվականին տրամադրվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման հանրապետական սփռման 1 և լսողական ծրագրի հաճախականության օգտագործման մարզային սփռման 1 լիցենզիա:

2023 թվականին տրամադրված հանրային
մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա
(անվանումը, սփռման տարածքը, լիցենզիայի գործողության ժամկետը)

«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն
23.09.2023 թ. - 23.09.2030 թ.

2023 թվականին տրամադրված լսողական
ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզիա
(անվանումը, սփռման տարածքը, լիցենզիայի գործողության ժամկետը)

«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ
18.04.2023 թ. - 18.04.2030 թ.

2023 թվականին Հանձնաժողով է ներկայացվել ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու 3 դիմում, որոնք բավարարվել են: Արդյունքում, տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 1 լիցենզիա՝ Հայաստանի Հանրապետության և 2 լիցենզիա՝ մեկ մարզի տարածքում սփռման համար:

2023 թվականին տրամադրված ցանցային օպերատորի
գործունեության լիցենզիաներ
(անվանումը, սփռման տարածքը, լիցենզիայի գործողության ժամկետը)

«ՄԻՐԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ
05.05.2023 թ. - 05.05.2033 թ.

«ՕԼԼՆԵԹ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մարզ
26.09.2023 թ. - 26.09.2033 թ.

«ԱՅՆԵԹ» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն
08.12.2023 թ. - 08.12.2033 թ.

2023 թվականին, լիցենզավորման գործառույթի շրջանակում, Հանձնաժողովի կողմից վերաձևակերպվել է 17 լիցենզիա՝ կազմակերպական-իրավական ձևի, անվան և գտնվելու վայրի փոփոխության հիմքերով, լիցենզիայի կրկնօրինակ է տրամադրվել 2 ընկերության:

2023 թվականին դիմումի համաձայն դադարեցվել է ցանցային օպերատորի գործունեության 6 լիցենզիա:

2023 թվականին դադարեցված ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաներ
(անվանումը, սփռման տարածքը, լիցենզիայի գործողության դադարեցման հիմքը)

«ԱՐԵՎ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ
դիմումի համաձայն

«ԹԵՎ» ՍՊԸ
ՀՀ, ք. Արմավիր, ք. Մեծամոր
դիմումի համաձայն

«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ
ՀՀ, ք. Սիսիան
դիմումի համաձայն

«ԱՐՏ-ՆԵԹ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ
դիմումի համաձայն

ՕՖԵԼՅԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՁ
ՀՀ, Շիրակի մարզ
դիմումի համաձայն

«ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մարզ
դիմումի համաձայն

7. Հեռարձակողների և ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկում

7.1 Ընդհանուր տեղեկություններ մշտադիտարկման մասին

«Մշտադիտարկումը կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների և օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկումն է» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 26-րդ կետ):

2023 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր վերահսկողական գործունեության շրջանակներում ընտրանքային սկզբունքով իրականացրել է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկում Օրենքով սահմանված կարգով՝ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսական առնվազն հինգ օր:

Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականցվել է ուղղակի դիտարկման, իսկ ցանցային օպերատորների դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, ցանցային օպերատորների և դիստրիբյուտորական ծառայություն մատուցողների կողմից հայտնաբերված իրավախախտումների հատկանիշների վերաբերյալ կազմվել է 53 արձանագրություն: Համեմատության համար նշենք, որ 2022 թվականին կազմվել էր 26 արձանագրություն:

Հանձնաժողովի վերահսկողական գործառույթի շրջանակներում 2023 թվականին տեղում դիտարկման նպատակով իրականացվել են գործուղումներ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում: Գործուղումների արդյունքում տեղում դիտարկվել է 45 ցանցային օպերատոր: Կազմված արձանագրությունների հիման վրա 34 ընկերության նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ:

Այս համատեքստում կարգավորող մարմինն անհրաժեշտ է համարում բարձրաձայնել տեխնոլոգիական զարգացմանը զուգահեռ օրեցօր աճող մի երևույթի մասին, որը մրցակցային անհավասար պայմաններ է ստեղծում նույնատեսակ ծառայություններ մատուցող լիցենզավորված ընկերությունների և համացանցում գործունեություն իրականացնող կազմակերպությունների միջև:

Ցանցային օպերատորները վճարում են օրենքով սահմանված տուրքերն ու հարկերը, պայմանագրեր են կնքում դիստրիբյուտորների հետ՝ տեսալսողական ծրագրերը վերահաղորդելու համար (ինչը նույնպես բավականին մեծ վճարներ է նախատեսում), իսկ համացանցում գործում են տարբեր օպերացիոն համակարգերի համար նախատեսված ծրագրային բազմաթիվ հավելվածներ, այդ թվում՝ օտարերկրյա ծագման, որոնց միջոցով առաջարկվող տեսալսողական ծրագրերի նկատմամբ վերահսկողությունը դուրս է Հանձնաժողովի լիազորություններից, իսկ ներկայացվող տեսալսողական ծրագրերի գին-քանակ հարաբերակցության առումով դուրս է նաև հայաստանյան դաշտում գործող լիցենզավորված շատ ցանցային օպերատորների հետ հավասար մրցակցությունից: Ակնառու է, որ առաջացել է անհրաժեշտություն՝ միջոցներ ձեռնարկելու նշված խնդիրը լուծելու ուղղությամբ: Օրենքով սահմանված կարգով Հանրային հեռարձակողի կողմից եռամյա կտրվածքով Հանձնաժողով է ներկայացվել տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում կարգավորող մարմինը փաստում է, որ 2023 թվականին Հանրային հեռարձակողն ապահովել է հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը:

Հանձնաժողովը, կարևորելով Հեռարձակողների ծրագրերում հանրօգուտ՝ մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների առկայությունը, հետևողական է Օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասով ամրագրված պահանջի պահպանմանը՝ «Լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը»:

Հարկ ենք համարում նշել, որ հանրօգուտ բովանդակության պատրաստման/գնման և սփռման պահանջի կատարումը լիցենզավորված հեռարձակողներն ապահովում են սեփական միջոցների հաշվին, մինչդեռ բազմաթիվ եվրոպական երկրներում հանրօգուտ բովանդակության ստեղծմանն ու տարածմանն օժանդակելու նպատակով մեդիա հեռարձակողների համար գործում են որակյալ բովանդակություն պատրաստելու և տարածելու խրախուսման տարատեսակ գործիքներ՝ ֆինանսական, տեխնիկական, վարչարարական: Ասերկբա է, որ նման գործիքներ ներդնելու անհրաժեշտություն կա նաև Հայաստանի Հանրապետությունում գործող լիցենզավորված հեռարձակողների համար, ինչի մասին Հանձնաժողովը բազմիցս բարձրաձայնել է:

Կարգավորող մարմինը հարկ է համարում անդրադառնալ նաև 2023 թվականի հունվարի 1–ին ուժի մեջ մտած Օրենքի 6–րդ հոդվածի 4–րդ մասի փոփոխություններով պայմանավորված խնդիրներին, որոնց բախվում են հատկապես մարզային հեռուստաընկերությունները: Փոփոխության համաձայն՝ եթեր հեռարձակվող լրատվական և մանկական հաղորդումները և ֆիլմերը պետք է մատչելի լինեն լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար: Հետևաբար, օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում պետք է ներկայացվի հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, իսկ լրատվական հաղորդում և ֆիլմ՝ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազագույն պահանջներին համապատասխան:

Վերոնշյալ փոփոխությունները բարդ կացության մեջ են դնում մարզային հեռուստաընկերություններին՝ պահանջելով լրացուցիչ ֆինանսական ռեսուրս: Իսկ մանկական հաղորդումների դեպքում նաև անհնարին են դարձնում Օրենքի նշված պահանջը չխախտելը՝ հաշվի առնելով մարզերում նման մասնագետների բացակայությունը: Նշված փոփոխության բացասական հետևանքներից էր այն, որ Հեռարձակողները, չցանկանալով խախտել օրենքը, պարզապես ստիպված են լինում դադարեցնել մանկական հաղորդումների հեռարձակումը, ինչը խախտում է երեխաների՝ համապատասխան տեղեկատվություն ստանալու իրավունքը: Հանձնաժողովի կարծիքով, մինչև օրենսդրական այս փոփոխության ուժի մեջ մտնելն անհրաժեշտ էր մարզերում սուրդոթարգմանության (մատնախոսության) մասնագետների պատրաստման համապատասխան ծրագիր մշակել և իրագործել:

7.2 Էթիկայի նորմերի պահպանման մշտադիտարկում

«Էթիկայի կանոնագիրը Հեռարձակողի կողմից միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթն է սեփական էթիկական նորմերի վերաբերյալ» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 28-րդ կետ):

Օրենքի համաձայն՝ բոլոր լիցենզավորված Հեռարձակողները պարտավոր են ունենալ էթիկայի կանոնագիր որն, ի թիվս այլնի, լիցենզիայի պայման է: Հեռարձակողները պարտավոր են նաև սահմանել իրենց կողմից ընդունված էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, ինչը ենթադրում է, որ Հեռարձակողը պետք է մեխանիզմներ սահմանի էթիկայի կանոնների կիրառումն ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետությունում գործող լիցենզավորված Հեռարձակողների մեծամասնությունն ընտրել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնի՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, իսկ մի քանի Հեռարձակող՝ ներքին ինքնակարգավորման տարբերակը:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում կրկնել նախորդ երկու տարիների տարեկան հաղորդումների մեջ տեղ գտած տեսակետն առ այն, որ հեռարձակողների ինքնակարգավորման մոդելը Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի կայացել: Հասարակությունը հակված չէ դիմելու ինքնակարգավորման մարմիններին: Հեռարձակողների կողմից էթիկայի կանոնագրի խախտումներ թույլ տալու դեպքում հասարակության բողոքի կամ դժգոհության արտահայտման նախընտրելի հարթակներից են շարունակում մնալ մամուլը կամ սոցիալական ցանցերը, Հանձնաժողով, երբեմն անմիջապես դատարան դիմելը:

Էթիկայի նորմերի խախտումների ու դրանց զսպող մեխանիզմների համաչափությունը շարունակում է խնդրահարույց մնալ, քանի որ խախտում կատարած Հեռարձակողները պատրաստ են իրենց եթերում հրապարակել համապատասխան եզրակացությունը և շարունակել խախտել էթիկայի նորմերը: Դա է վկայում նաև այն փաստը, որ Հանձնաժողովի կողմից Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմին ուղղված բողոքների մեծ մասը վերաբերել է միևնույն Հեռարձակողին և կրում է շարունակական բնույթ:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը 2023 թվականին երեք անգամ դիմել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմին, որից երկուսը՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի «Լրաբեր» և «Հայելի ակումբ» հաղորդման մի շարք թողարկումներում հնչեցված առանձին արտահայտությունների մասով, իսկ մեկը՝ «ՖՐԻ ՆՅՈՒՔ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ՖՐԻ ՆՅՈՒՔ» տեսալսողական ծրագրի «Ազատ Ջրույց» հաղորդման ժամանակ հնչեցված առանձին արտահայտությունների մասով:

7.3 Ընտրությունների լուսաբանման մշտադիտարկում

Հանձնաժողովի դերը՝ որպես տեսալսողական մեդիաոլորտը կարգավորող անկախ սահմանադրական մարմին, կարևորվում է ընտրական գործընթացի թափանցիկությունն ապահովելու, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմաններ ապահովելու գործում:

Նախընտրական քարոզչության համար օրենսդրությամբ սահմանված տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները Հանձնաժողովի կողմից կատարվել են մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ և հնարավորություններ նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից: Այսպես՝

Հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 19-ին ընդունել է «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանելու մասին» թիվ 69-Ա որոշումը:[2]

Հանձնաժողովը, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանների և քաղաքացիների (ընտրողների) համար անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման նպատակով, 2023 թվականի հուլիսի 19-ին ընդունել է նաև «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 70-Ա որոշումը:[3]

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20–րդ հոդվածի 6–րդ մասի համաձայն՝ թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող հեռուստառադիոհեռարձակում իրականացնող մասնավոր հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո իրենց եթերով հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը և չի կարող փոփոխվել մինչև նախընտրական քարոզչության ավարտը: Նշված տեղեկատվությունը վճարովի եթերաժամ տրամադրող տեսալսողական մեդիածառայությունների կողմից հրապարակվել է մինչև 2023 թվականի հուլիսի 19-ը:[4]

[2]Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://tvradio.am/wp-content/uploads/2023/07/69-23.pdf
[3]Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://tvradio.am/wp-content/uploads/2023/07/70-23.pdf

Հարկ է նշել նաև, որ ավագանու այս ընտրություններին առաջին անգամ էր գործում 2021 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի լրացումը առ այն, որ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 15 րոպե:

Հանձնաժողովը 2023 թվականի օգոստոսի 17-ին տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, իսկ օգոստոսի 21-ին Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական շտաբների ներկայացուցիչների համար կազմակերպել է նաև «Երևանի ավագանու ընտրությունների լուսաբանման և նախընտրական քարոզչության առանձնահատկությունները» թեմայով հանդիպում-խորհրդակցություններ, որոնց ընթացքում քննարկվել են Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև ընտրական օրենսդրության պահանջները:

2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ը ներառյալ Հանձնաժողովը իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տեսալսողական մեդիածառայությունների՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն: Հանձնաժողովը տեսալսողական մեդիածառայություն մատուցողների հեռարձակած տեսալսողական ծրագրերի՝ ընտրական օրենսդրության համապատասխանության մշտադիտարկումն իրականացրել է հիմք ընդունելով՝

- **1.** տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքները,
- **2.** տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյաններում մուտքագրված տվյալները,
- **3.** տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը,
- **4.** ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների կողմից Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը,
- **5.** պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների կողմից Հանձնաժողով պաշտոնապես ներկայացրած տեղեկատվությունը,
- **6.** հեռարձակողների կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Հանձնաժողովն ուղղակի դիտարկումն իրականացրել է տեսալսողական ծրագրերի վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

[4] Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝
https://tvradio.am/wp-content/uploads/2023/07/%D5%B4%D5%A5%D5%AF-%D6%80%D5%B8%D5%BA%D5%A5-2023-1.pdf

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ, հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստա-ընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը՝ հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Հանձնաժողովը 2023 թվականի սեպտեմբերի 1-ին ընդունել է «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 81–Ա որոշումը,[5] որը ներառել է 2023 թվականի օգոստոսի 23-ից օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել՝ նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ին:

Հանձնաժողովը 2023 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունել է «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 86–Ա որոշումը,[6] որը ներառել է 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 11-ին:

Հանձնաժողովը 2023 թվականի սեպտեմբերի 22-ին ընդունել է «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 91-Ա որոշումը,[7] որը ներառել է 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ 2023 թվականի սեպտեմբերի 22-ին:

[5]Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://tvradio.am/wp-content/uploads/2023/08/81-23.pdf
[6]Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://tvradio.am/wp-content/uploads/2023/09/86-23-1.pdf
[7]Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://tvradio.am/wp-content/uploads/2023/09/91-23.pdf

Հանձնաժողովի նախաձեռնությամբ ընտրական օրենսդրության խախտման հատկանիշներով կազմվել է երկու արձանագրություն, որոնց հիման վրա էլ հարուցվել են վարչական վարույթներ՝ մեկը «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության («ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» տեսալսողական ծրագիր) նկատմամբ՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտման հատկանիշներով, այն է՝ թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին (հանրաքվեի քարոզչության կողմերին) նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին տրամադրվող նախընտրական քարոզչական տեսալսողական հաղորդումները (Հանրային հեռարձակողի դեպքում՝ նաև օրենքով սահմանված անվճար եթերաժամը) պետք է էկրանի վրա պարտադիր անընդմեջ ուղեկցվեն «Նախընտրական քարոզչություն» լուսագրով, իսկ լսողական հաղորդումների դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ պետք է հիշեցվի դրա մասին: Մյուս վարույթը հարուցվել է «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության («ՆՈՒՌ» տեսալսողական ծրագիր) նկատմամբ՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հատկանիշներով, այն է՝ «Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն իրականացնելը» և «Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից, ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով, արգելվում է»:

Մշտադիտարկման արդյունքներն ուսումնասիրելով՝ կարգավորող մարմինն արձանագրել է, որ առանձին տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից առկա էին ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքին հատկացված եթերաժամի որոշակի անհամաչափություն: Սակայն Հանձնաժողովն իրականացրած վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ այդ անհամաչափությունը պայմանավորված է կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի կողմից նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում իրականացված միջոցառումների քանակական բաշխման տարբերություններով, ինչպես նաև կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի կողմից անվճար և վճարովի եթերաժամի օգտագործման, տեսալսողական ծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամությամբ:

Ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովը տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում տրամադրած կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի կողմից օգտագործված եթերաժամի արձանագրված անհամաչափությունը չի գնահատում՝ որպես տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզարշավին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի համար հավասար պայմանները ապահովելու խախտում:

8. Տեսալսողական ծրագրերի թեմատիկ ուղղվածությունն ու եթերի կառուցվածքը

«Թեմատիկ ուղղվածությունը տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն է ըստ բովանդակային առանձնահատկությունների» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 7-րդ կետ):

Հանձնաժողովն, երաշխավորելով տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների խմբագրական անկախությունը, միաժամանակ կարևորում է վերջիններիս կողմից հեռարձակվող տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը, տեսալսողական հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը:

Ստորև փաստացի տվյալների հիման վրա ներկայացնում ենք Հանձնաժողովի կողմից կատարված վերլուծության արդյունքները:

Գծապատկեր 11. Հանրապետական և մայրաքաղաքային սփռման տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը

ՀԱՆՐՕԳՈՒՏ	32%	ԼՐԱՏՎԱԿԱՆ	10%
ԺԱՄԱՆՑԱՅԻՆ	17%	ԿՈՄԵՐՑԻՈՆ	7%
ՀԵՌՈՒՍՏԱՍԵՐԻԱԼ	16%	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ	4%
ԱՅԼ ԹԵՄԱՆԵՐ	11%	ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՖԻԼՄ	2%

Գծապատկեր 12. Հանրօգուտ հաղորդումներ



Գծապատկեր 13. Հանրապետական և մայրաքաղաքային սփռման տեսալսողական ծրագրերի՝ 2023 թվականի եթերում հայերեն հաղորդումների կշիռը



* 2020թ. օգոստոս ամսից գործում է համաձայն նոր օրենքի պահանջների

Գծապատկեր 14. Հանրապետական և մայրաքաղաքային սփռման տեսալսողական ծրագրերի սեփական հաղորդումների՝ 2021-2023 թվականների համեմատական պատկերը



Գծապատկեր 15. Մարզային սփռման տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածք



Գծապատկեր 16. Մարզային սփռման տեսալսողական ծրագրերի հանրօգուտ հաղորդումները



Գծապատկեր 17. Մարզային սփռման տեսալսողական ծրագրերի եթերում հայերեն հաղորդումների՝ 2021-2023 թվականների համեմատական պատկերը



Գծապատկեր 18. Մարզային սփռման տեսալսողական ծրագրերի սեփական հաղորդումների՝ 2021-2023 թվականների համեմատական պատկերը



Գծապատկեր 19. Լսողական մեդիածառայություն մատուցողների լսողական ծրագրերի եթերի կառուցվածքը

9. Վարչական վարույթներ

Հանձնաժողովն, իրականացնելով Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորությունները, 2023 թվականին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված վարչարարության իրականացման արդյունքում հարուցել է 64 վարչական վարույթ. 57-ը՝ սեփական նախաձեռնությամբ, 7-ը՝ վարչական բողոքների հիման վրա: Հավելենք, որ 12 վարչական վարույթի որոշումները կայացվել են 2024 թվականի հունվարին:

2022 թվականի մարտի 16-ի թիվ 37-Ա որոշմամբ «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ–ի նկատմամբ Հանձնաժողովի կողմից կասեցված ևս մեկ վարույթ ավարտվել է 2023 թվականին:[8]

Գծապատկեր 20. Կարգավորող մարմնի վերահսկողության ոլորտում գործող և վարչարարություն իրականացված ընկերություններ



Կարգավորող պետական մարմինը տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերելու արդյունքում՝

[8]Հանձնաժողովի՝ 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 44-Ա որոշման համաձայն վարչական վարույթը կարճվել էր, բողոքաբերի կողմից բերվել էր վարչական բողոք, որի արդյունքում 2023 թվականի հուլիսի 7-ի թիվ 68-Ա որոշմամբ վարչական բողոքը մերժվել է, և 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 44-Ա որոշումը մնացել է անփոփոխ:

Սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների պարագայում՝

51 վարչական վարույթի արդյունքում կիրառել է տուգանք,

1 վարչական վարույթի արդյունքում կիրառել է լիցենզիայի գործողության կասեցում՝ 30 օր ժամկետով,

2 վարչական վարույթի արդյունքում կիրառել է վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում,

3 վարչական վարույթի արդյունքում վարչական վարույթը կարճել է,

Վարչական բողոքների պարագայում՝

1 վարչական վարույթի արդյունքում կիրառել է վարչական տույժ՝ տուգանք,

5 վարչական վարույթի արդյունքում վարչական վարույթները կարճել է,

1 վարչական վարույթի արդյունքում վարչական վարույթը կասեցրել է:[9]

Գծապատկեր 21. Վարչական վարույթի կիրառում



[9]Հանձնաժողովը 2023 թվականի մայիսի 22-ի 49-Ա որոշմամբ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ–ի նկատմամբ 2023 թվականին հարուցված վարչական վարույթը կասեցրել է:

Վարչական վարույթների հարուցման համար հիմք են հանդիսացել հետևյալ իրավախախտումները՝

ա) Ոչ սեփական տեսալսողական հաղորդումների հեռարձակում առանց դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության:

բ)Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորի կողմից կարգավորող պետական մարմնին չտեղեկացնելը:

գ) Հեռարձակողների կողմից ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում՝ սեղմ ժամկետում միևնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկման չապահովում:

դ) Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից գովազդը կարգավորող օրենսդրության դրույթների խախտում:

ե) Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկության չներկայացում:

զ) Տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչերի տարածում:

է) Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման բացակայություն:

ը) Ընտրական օրենսդրության խախտում:

թ) Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների, ֆիլմերի հեռարձակում՝ առանց հայերեն ընկալման որևէ միջոցով (կրկնօրինակմամբ, հնչյունավորմամբ և (կամ) ենթագրով) ուղեկցման:

ժ) Լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի չպահպանում:

ի) Հեռարձակողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրին անհամապատասխան գործունեություն:

լ) Հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որևէ ձևով փոփոխելու պահանջը խախտելը:

խ) Դիստրիբյուտորի կողմից առանց Օրենքով սահմանված ծանուցման գործունեության իրականացում:

ծ) Ցանցային օպերատորների կողմից իրենց՝ անվճար տարածման իրավունքով տրամադրված հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերն իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներին համապատասխան չտարածում:

կ) Օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում տեղում դիտարկում իրականացնող անձանց անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով չապահովում:

2023 թվականին հարուցված վարչական վարույթների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված N 4-ում:

Հանձնաժողովը 2023 թվականի դեկտեմբերի 20-ին ընդունել է ««ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ընկերության լիցենզիայի գործողության կասեցման վերաբերյալ» թիվ 111-Ա որոշումը՝ կասեցնելով ընկերության լիցենզիայի գործողությունը 30 օր ժամկետով:

Ընկերության կողմից հեռարձակվող «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի «Ուրբաթը Տիգրան Քեոսայանի հետ» հաղորդման 2023 թվականի նոյեմբերի 17-ի եթերի ընթացքում խախտվել էր Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի կետով ամրագրված պահանջը՝ ***լսողական հաղորդման ընթացքում տարածվել են օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր***:

2024 թվականին՝ լիցենզիայի կասեցման ժամանակահատվածում, «ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ընկերությունը մամլո հաղորդագրություն էր տարածել առ այն, որ ընկերությունը որոշել է եթերից հանել «Ուրբաթը Տիգրան Քեոսայանի հետ» հաղորդումը: Միաժամանակ նշել էր, որ ««ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ընկերությունը չի կիսում և դատապարտում է «Ուրբաթը Տիգրան Քեոսյանի հետ» հաղորդման շրջանակներում հեղինակի կողմից արված վիրավորական արտահայտությունները:

Մի շարք լրատվամիջոցներով տարածվել էր նաև «Ռադիո Սպուտնիկի» պաշտոնական կայքէջում հունվարի 16-ին հրապարակված մամլո հաղորդագրությունը (https://radiosputnik.ru/20240116/armeniya-1921705370.html): «Ռադիո Սպուտնիկի» գլխավոր խմբագիր Կիրիլ Վիշինսկին Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանին ուղղված պաշտոնական նամակում ափսոսանք էր հայտնել, որ 2023 թվականի աշնանը ռադիոընկերության եթերում «հնչել են արմատական կտրուկ արտահայտություններ, որոնք, ակնհայտորեն, հակասում են «Ռադիո Սպուտնիկի» խմբագրական քաղաքականությանը»՝ ընդգծելով, որ Ռուսաստանի և Հայաստանի լրագրողներն ու հասարակական գործիչները պատասխանատվություն են կրում երկու երկրների միջև բարեկամության և դաշնակցային հարաբերությունների մթնոլորտի պահպանման համար: «Ռադիո Սպուտնիկի» գլխավոր խմբագիրը համոզմունք էր հայտնել, որ իր այս նամակով «նյարդայնացնող այն տհաճությունը», որն առաջացել էր եթերում հնչած արմատական արտահայտությունների պատճառով, կսպառվի:

Համաձայն Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լիցենզիայի գործողությունը կասեցնելուց հետո Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում նշված խախտումները վերացնելու դեպքում, կարգավորող մարմինը վերացնում է կասեցումը: 2024 թվականի հունվարի 23-ին Հանձնաժողովը «ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ընկերության լիցենզիայի գործողության կասեցումը վերացնելու մասին որոշում է ընդունել:

Ամփոփելով՝ նշենք, որ եթե 2022 թվականին հարուցվել էր 44 վարչական վարույթ, ապա 2023 թվականին հարուցված վարչական վարույթների թիվը 64 է:

Գծապատկեր 22.Հարուցված վարչական վարույթների՝ 2011-2023 թվականների համեմատական պատկերը



Վարչական վարույթների թիվն ավելացել է առաջին հերթին ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկումների արդյունքում հայտնաբերված իրավախախտումների, ինչպես նաև վերջիններիս կողմից մեկ տարում նույն խախտումը կրկնակի կատարելու արդյունքում: Եթե 2022 թվականին վարչական վարույթ է հարուցվել 18 ցանցային օպերատորի նկատմամբ, ապա 2023 թվականին՝ 36 ցանցային օպերատորի: Ընդ որում, 5 ցանցային օպերատորի կողմից նույն իրավախախտումը կրկնակի է կատարվել:

Գծապատկեր 23. Հարուցված վարչական վարույթների և կիրառված որոշումների՝ 2011-2023 թվականների համեմատական պատկերը



Իրականացված վարչական վարույթների արդյունքում վճարվել է 8 382 518 ՀՀ դրամ (639 939 դրամը վճարվել է 2022 թ. իրականացված վարույթների արդյունքում, իսկ 1 000 000 դրամը՝ 2021 թվականի):

10. Դատական բողոքարկումներ

2023 թվականին Հանձնաժողովը դատական պաշտպանության աշխատանքներ է իրականացրել վարչական դատարաններում քննվող վարչական գործերով, ներկայացրել այդ գործերով հայցադիմումների պատասխաններ, վերաքննիչ բողոքներ, վերաքննիչ բողոքների պատասխաններ, միջնորդություններ և առարկություններ՝ ապահովելով նաև դատարաններում սույն գործերով դատական նիստերին մասնակցությունը:

2022 թվականի տարեկան հաղորդման մեջ Հանձնաժողովը ներկայացրել էր այն պատճառները, որոնց արդյունքում Հանձնաժողովի ընդունած որոշումների դեմ ներկայացված հայցադիմումների քանակն ավելացել էր: Մեկ անգամ ևս արձանագրենք, որ ազատորեն օգտվելով Հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրավունքից՝ որոշ Հեռարձակողների կողմից շարունակվում է դատական կարգով Հանձնաժողովի կայացրած ցանկացած որոշման դեմ բողոքարկման միտումը:

Գծապատկեր 24. Հանձնաժողովի որոշումների դատական կարգով բողոքարկման 2011- 2023 թթ. տվյալները



2023 թվականին տեսալսողական մեդիածառայություն մատուցող, ցանցային օպերատոր և դիստրիբյուտոր հանդիսացող ընկերությունների կողմից ներկայացված հայցերով դատարաններում քննվել է **24** վարչական գործ. **8-ի** հայցադիմումները ներկայացվել են **2023** թվականին, իսկ **16-ինը**՝ նախորդ տարիներին.

<u>այդ թվում՝</u>

1. «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ-ի ներկայացրած հայցերով՝ 12 վարչական գործ,
2. «Մարտունի ՏՎ» ՍՊԸ-ի ներկայացրած հայցերով՝ 2 վարչական գործ,
3. «Հուսաբեր» ՓԲԸ-ի հայցերով՝ 4 վարչական գործ,
4. «Ամեդիա», «Շարկ», «Հոուփ Մեդիա», «Հիբրիդ Բրոթքասթինգ», «Ռադիո Վան», «Սոլիդ Փարթներ» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայցերով՝ 1-ական վարչական գործ:

Վերը նշված իրավաբանական անձանց կողմից դատարան են բողոքարկվել Հանձնաժողովի՝ սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների, վարչական տույժի ենթարկելու որոշումները:

Հանձնաժողովի կողմից վարչական տույժի ենթարկելու որոշումների դեմ բերված բողոքներով դատարաններում քննվել է 9 վարչական գործ (***Մանրամասները՝ Հավելված N 5-ում***):

2023 թվականին դատարաններում ըստ էության լուծվել (ավարտվել) է 5 վարչական գործի քննություն, որոնց վերջնական դատական ակտերը կայացվել են Հանձնաժողովի օգտին (***Մանրամասները՝ Հավելված N 6-ում***):

2023 թվականին ՀՀ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում 6 գործով Հանձնաժողովի օգտին կայացվել են վճիռներ և որոշումներ, սակայն դեռ չեն կայացվել ըստ էության լուծող դատական ակտեր (***Մանրամասները՝ Հավելված N 7-ում***):

2023 թվականին ՀՀ վարչական դատարանը 3 գործով բավարարել է Հանձնաժողովի որոշումների դեմ ներկայացված հայցապահանջները, սակայն Հանձնաժողովի կողմից սույն վճիռները բողոքարկվել են՝ ներկայացնելով վերաքննիչ բողոքներ (***Մանրամասները՝ Հավելված N 8-ում***):

Հանձնաժողովի կողմից վերը նշված դատավարական գործողություններն իրականացվել են՝ պահպանելով դատավարական և նյութական իրավունքի նորմերի դրույթները, որոնք էական նշանակություն են ունեցել գործերի ընթացքի և ճիշտ լուծման համար: Այդ է վկայում Հանձնաժողովի օգտին կայացված դատական ակտերի դրական միտումը:

Այսպիսով, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հանձնաժողովի որոշումների դեմ հայցերով դեռևս 19 վարչական գործ ընթացքի մեջ է:

11. Պետական տուրքի գծով ՀՀ պետական բյուջե կատարված փաստացի մուտքեր

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները 2023 թվականին պետական տուրքի գծով ՀՀ պետական բյուջե մուտքագրված 32 927 173 ՀՀ դրամ գումարն ապահովել են տեսալսողական և լսողական ծրագրերի հեռարձակման, ցանցային օպերատորների գործունեության համար տարեկան պետական տուրքերի, հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման, լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների մասնակցության, ինչպես նաև սահմանված ժամկետում չվճարված տարեկան պետական տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի համար գանձված գումարների հաշվին:

Համեմատության կարգով նշենք, որ Հանձնաժողովի կողմից գանձվող պետական տուրքը 2021 թվականին կազմել է 33 946 820 ՀՀ դրամ, 2022 թվականին՝ 43 102 559 ՀՀ դրամ: 2022 թվականի պետական տուրքի մուտքերի բարձր ցուցանիշը 2021 և 2023 թվականներին գանձված փաստացի մուտքերի նկատմամբ պայմանավորված է Հանձնաժողովի կողմից 2022 թվականին հայտարարված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման, ինչպես նաև լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մի շարք մրցույթների անցկացմամբ:

12. Միջազգային համագործակցություն

2023 թվականի ընթացքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը շարունակել է արդյունավետ փոխգործակցությունը արտերկրի գործընկերների, տարբեր երկրների մեդիակարգավորող մարմինների, միջազգային կազմակերպությունների ու հարթակների հետ:

Հանձնաժողովը Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների կարգավորող մարմինների ֆորումի (BRAF), Կենտրոնական եվրոպայի կարգավորող ֆորումի (CERF), Միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակի (MNRA), Մեդիա կարգավորող մարմինների ֆրանկոֆոն հարթակի (REFRAM) լիիրավ անդամ է, ինչպես նաև մինչև 2023 թվականը Փոքր ազգերի կարգավորող մարմինների ֆորումի (SNRF) անդամ:

Փոքր ազգերի կարգավորող մարմինների ֆորումը (SNRF), որը Լոնդոնի միջազգային ինստիտուտի (IIC) մեծ ընտանիքի մի ճյուղն է, միտված է միավորելու տարբեր մշակույթ, ավանդույթներ, բայց փոքր բնակչություն ունեցող երկրների մեդիակարգավորողներին: 2023 թվականին Հանձնաժողովը Լոնդոնի միջազգային ինստիտուտի (IIC) կողմից հրավեր ստացավ լիիրավ անդամակցելու հարթակին և մասնակցել, ոչ միայն SNRF-ի տարեկան հանդիպումներին, այլև կազմակերպության բոլոր միջոցառումներին: Կարգավորող մարմինը, քննարկելով առաջարկը, ընդունեց այն և 2023 թվականի հունիսից դարձավ IIC-ի լիիրավ անդամ:

Հանձնաժողովը կնքված երկկողմանի հուշագրերի և պայմանագրերի հիման վրա փոխգործակցում է 7 երկրների (Իտալիա, Չեխիա, Մոլդովա, Ռուսաստան, Ուկրաինա, Լիտվա, Վրաստան) կարգավորող մարմինների հետ:

2023 թվականի փետրվարին Արգենտինայի հաղորդակցությունների պետական մարմնի (ENACOM) հրավերով Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանն աշխատանքային այցով գտնվել է Բուենոս Այրեսում, հանդիպումներ ունեցել Արգենտինայի հաղորդակցությունների պետական մարմնի նախագահ Կլաուդիո Ամբրոսինիի և մարմնի անդամների, «Արգենտինական ռադիո և հեռուստատեսություն» պետական ընկերության նախագահ Ռոսարիո Լուֆրանոյի, Արգենտինայի և Ուրուգվայի հայկական լրատվամիջոցների ղեկավարների հետ: Քննարկվել են երկկողմ հարաբերությունների հեռանկարները, մի շարք նախագծեր, որոնց իրագործումը կնպաստի համագործակցության խթանմանն ու զարգացմանը: Այցի ավարտին Արգենտինայի Հանրապետության հաղորդակցությունների պետական մարմնի (ENACOM) և Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի (ՀՌՀ) միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր:

2023 թվականի ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են EPRA-ի գարնանային և աշնանային նստաշրջաններին՝ Օսլո (Նորվեգիա) և Բուխարեստ (Ռումինիա) քաղաքներում, որոնց ժամանակ քննարկվել են «Կոնտենտի մատակարարման ապագան», «Մեդիա կարգավորողները թվային միջավայրում» և «Մեդիան և տեղեկատվությունը հանուն հանրային բարօրության» թեմաները: Նստաշրջանների ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցիչները երկկողմ հանդիպումներ են ունեցել Վրաստանի, Լիտվայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Մոլդովայի գործընկերների հետ:

2023 թվականի մայիսին Հանձնաժողովի ներկայացուցիչը Չեխիայի Պրահա քաղաքում մասնակցել է ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակում կազմակերպված հաճախականությունների օգտագործման հարցերով աշխատանքային խմբի 15-րդ հանդիպմանը (Spectrum Expert Working Group, SEWG):

2023 թվականի մայիսին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հրավերով Երևան էին այցելել Լիտվայի հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի և Վրաստանի հաղորդակցության հանձնաժողովի պատվիրակությունները: Աշխատանքային այցի ընթացքում կարգավորող մարմինների անդամները քննարկել են երեք երկրների հեռարձակվող մեդիաների առջև ծառացած խնդիրները, լիցենզավորման մոդելների առանձնահատկությունները, քարոզչության, կեղծ տեղեկատվության, «ատելության խոսքի» դեմ պայքարի հայեցակարգերը, համացանցում տեսալսողական հոսքերի կարգավորման օրենսդրությունը և այլն: Լիտվայից և Վրաստանից ժամանած մեր գործընկերները հանդիպել են հանրային հեռարձակողի խորհրդի անդամների հետ, այցելել Հայաստանի հանրային հեռուստաընկերություն և ռադիոընկերություն: Պատվիրակության անդամներին ընդունել է ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը:

2023 թվականին առաջին անգամ Հանձնաժողովի ներկայացուցիչը Ֆինլանդիայի Տամպերե քաղաքում մասնակցել է «Համացանցի կառավարման եվրոպական երկխոսություն 2023» (EuroDIG 2023) համաեվրոպական հարթակի կողմից կազմակերպված՝ «Համացանցը ճգնաժամի ժամանակներում. ռիսկ, դիմակայություն, հույս» խորագիրը կրող համաժողովին: Թեև Հանձնաժողովը համացանցային մեդիա կարգավորման որևէ լիազորություն չունի, սակայն առկա են մասնագիտական բազմակողմ քննարկումներ, և կարգավորող մարմինը EuroDig-ը դիտարկում է որպես սերտ համագործակցության փոխարդյունավետ հարթակ:

2023 թվականի սեպտեմբերին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի գլխավորած պատվիրակությունը Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում մասնակցել է Միջերկրածովյան կարգավորող մարմինների պլատֆորմի (MNRA) 22-րդ համաժողովին: Միջերկրածովյան կարգավորող մարմինների պլատֆորմը, որը 2021 թվականի քվեարկության արդյունքում Հանձնաժողովին միաձայն ընդունել է կառույցի անդամ, միավորում է 25 պետություն:

Համաժողովի ընթացքում քննարկվել են լրագրությունը և փաստերի ստուգումը, խոսքի ազատությունը, տեսանյութերի կարգավորումը օնլայն հարթակներում թեմաները: Համաժողովի ընթացքում Ալբանիայի կարգավորող մարմինը ընտրվել է որպես պլատֆորմի նոր նախագահող երկիր, իսկ Հայաստանի կարգավորող մարմինը՝ փոխնախագահող: Որոշվել է 2024 թ. Միջերկրածովյան կարգավորող մարմինների պլատֆորմի (MNRA) 23-րդ համաժողովն անցկացնել Հայաստանում:

2023 թվականի հոկտեմբերին Հանձնաժողովն, որպես լիիրավ անդամ, Գերմանիայի Քյոլն քաղաքում մասնակցեց Լոնդոնի միջազգային ինստիտուտի (IIC) կարգավորող մարմինների տարեկան հանդիպմանը, որին հաջորդեց Փոքր ազգերի կարգավորող մարմինների ֆորումը (SNRF): Համաժողովի ընթացքում Հանձնաժողովի պատվիրակությունն ունեցել է երկկողմ հանդիպումներ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ:

2023 թվականի սեպտեմբերին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնության թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցության նախարարի տեղակալ Բելլա Չերկեսովայի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև կնքված զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի կետերի կատարման ընթացքի, երկու երկրների գերատեսչությունների միջև ձևավորված համագործակցության, համատեղ ծրագրերի մշակմանը վերաբերող հարցեր: Քննարկվել են նաև հանրային մուլտիպլեքսում օտարերկրյա տեսալսողական ծրագրերի բովանդակության հետ կապված խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանը 2023 թվականի նոյեմբերին ընդունել է փաստահավաք առաքելությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Կիմո Կիլյունենին և Բորիանա Աբերգին: Կարգավորող մարմնի կողմից որդեգրած բարեփոխումների օրակարգում կարևոր տեղ են զբաղեցնում ատելության խոսքի, բռնության կոչերի դեմ պայքարը, համացանցային տիրույթի տեսալսողական բովանդակության կանոնակարգումը: Այս առնչությամբ եվրոպական գործընկերները, վստահաբար, կարող են իրենց կարևոր մասնակցությունն ունենալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել և խորացնել Հանձնաժողովի և ԵԽ-ի հետագա համագործակցությունը:

2023 թվականին Հանձնաժողովն իրականացրել է մի շարք աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ են կրելու: Դրանցից են՝ հանդիպումները ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցիչների հետ, որոնց հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել համագործակցել հնարավոր նախագծերի շրջանակներում:

13. Ընդունված իրավական ակտեր

2023 թվականին Հանձնաժողովը ընդունել է 113 որոշում՝ 111 անհատական և 2 ներքին: Մասնավորապես՝

1. 2023 թվականի փետրվարի 27-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 19-ի թիվ 32-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 6-Լ որոշում:

2. 2023 թվականի հուլիսի 19-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանելու մասին» թիվ 69-Ա որոշում:

3. 2023 թվականի հուլիսի 19-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 70-Ա որոշում:

Գծապատկեր 25. *2019-2023 թվականներին Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համեմատական պատկերը*



14. Հանձնաժողովին հասցեագրված գրություններ և հարցումներ

2023 թվականին Հանձնաժողով մուտքագրվել է 1098 գրություն, քաղաքացիներից և կազմակերպություններից ստացվել է 111 հարցում, դիմում-բողոք (հեղինակային իրավունքի խախտումների, տեսալսողական մեդիածառայությունների բնագավառը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու, տեսալսողական ծրագրերի վերահաղորդումները դադարեցնելու, վարչական վարույթ հարուցելու մասին և այլն), որոնց պատասխան է տրվել համաձայն գործող օրենսդրական ակտերի: 2023 թվականին Հանձնաժողովից ելքագրվել է 929 գրություն:

Գծապատկեր 24. 2019-2023 թվականներին Հանձնաժողով մուտքագրված գրությունների և դիմում-բողոքների համեմատական պատկերը



15. Այլ տեղեկություններ

2023 թվականին ՀՀ Ազգային Ժողովի՝ 2023 թվականի դեկտեմբերի 6-ի ԱԺՈ-80-Ա և ԱԺՈ-81-Ա որոշումներով Հանձնաժողովի կազմը համալրվել է 2 նոր անդամով՝ Հասմիկ Հակոբյան և Նունե Հախվերդյան:

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար կազմակերպվել և անցկացվել է 11 մրցույթ, որոնց նախորդել են նախապատրաստական աշխատանքներ:

Հանձնաժողովի 18 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել են՝ մասնակցելով ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն», «Ժամանակի կառավարում», «Որոշումների կայացում», «Փաստաթղթերի նախապատրաստում», «Խնդրի լուծում», «Հաշվետվությունների մշակում», «Փաստաթղթաշրջանառություն (գործավարություն, արխիվային գործ)», «Իրավական ակտերի մշակման առանձնահատկությունները», «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ», «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում», «Համակարգչային ծրագիր վիճակագրական տվյալների մշակման համար՝ մայքրոսոֆթ էքսել ծրագիր», «Անձնակազմի կառավարում և պետական կադրային քաղաքականություն», «ՀՀ-ում ֆինանսական կառավարման և հսկողության համակարգը՝ կազմակերպությունների ռիսկերի բացահայտում, կառավարում, հսկողության համակարգերի կիրառում», «Խոսքի մշակույթ, պաշտոնական փաստաթղթերի լեզուն» թեմաներով հեռավար և առկա դասընթացներին:

2 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «2024 թվականի ծրագրային բյուջետավորում» թեմայով դասընթացին, իսկ գնումների մասնագետը՝ գնումների համակարգողների 2023 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

2023 թվականին Հանձնաժողովի 2 քաղաքացիական ծառայող արժանացել է խրախուսանքի:

Տեղեկությունների համալրման ուղղությամբ աշխատանքներ են կատարվել նաև Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի՝ Հանձնաժողովի բաժնում:

16. 2023 թվականի բյուջեի կատարողական

Հանձնաժողովի գործունեությունը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից: Հանձնաժողովն՝ որպես բյուջետային գլխավոր կարգադրիչ, 2023 թվականին իրականացրել է մեկ ծրագիր և երեք միջոցառում:

Հանձնաժողովի պատասխանատվությամբ 2023 թվականի ընթացքում իրականացվել է «Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորում» ծրագիրը, որի կատարողականը ճշտված բյուջեի նկատմամբ կազմել է 368.1 մլն դրամ կամ 99.6 %: Շեղումը հիմնականում պայմանավորված է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գազի սպառման, միջքաղաքային կապի, ներքին գործուղումների ծախսերի տնտեսմամբ, ինչպես նաև գնումների պլանով նախատեսվածից ավելի ցածր գնով ապրանքների և սարքավորումների ձեռքբերմամբ:

Նախորդ տարվա համեմատ վերը նշված ծրագրի ծախսերն աճել են 43.9 մլն դրամով կամ մոտ 13.5 %-ով, որը պայմանավորված է հիմնականում նվազագույն աշխատավարձի աճով և Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությամբ՝ «Ծախսերի նախահաշվին ավելացվում է այն ներկայացնելու պահին նախորդող տասներկու ամսվա ընթացքում գանձված տուգանքների, պետական տուրքերի և տույժերի 30 տոկոսը սեփական տնօրինման նպատակով», ինչպես նաև «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման նպատակով 2023 թվականի պետական բյուջեից միջոցների նախատեսմամբ և հատկացմամբ:

1007 «Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորում» ծրագրի 11001 «Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորման ծառայություններ» միջոցառմամբ 2023թ. պետական բյուջեով հատկացվել է 366731.40 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 363471.40 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 361799.7 հազ. դրամ: 2023 թվականի ճշտված բյուջեն կատարվել է 99.5 %-ով: Ճշտված բյուջեի և դրամարկղային ծախսի 1671.7 հազ. դրամ չափով շեղումը պայմանավորված է գազի սպառման, միջքաղաքային կապի, ներքին գործուղումների ծախսերի տնտեսմամբ, ինչպես նաև գնումների պլանով նախատեսվածից ավելի ցածր գնով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ: 2022 թվականին նշված միջոցառմամբ փաստացի ծախսը կազմել է 320364.7 հազ. դրամ: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 41435.0 հազ դրամով կամ 12.9 %-ով, որը պայմանավորված է հիմնականում նվազագույն աշխատավարձի աճով:

1007 «Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորում» ծրագրի 11002 «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված վճարումներ» միջոցառմամբ 2023 թվականին ճշտված պլանը և փաստացի ծախսը կազմել է 63.5 հազ. դրամ: 2022 թվականին ծախսը 80.5 հազ. դրամ էր: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշը նվազել է 21.1 % կամ 17.0 հազ. դրամով:

1007 «Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորում» ծրագրի 31001 «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառմամբ տարեկան հաստատված ցուցանիշը կազմել է 7355.0 հազար դրամ, ճշտված պլանը և փաստացի ծախսը՝ 6185.4 հազ. դրամ: 2022 թվականին նշված միջոցառմամբ փաստացի ծախսը կազմել է 3720.3 հազ. դրամ: 2022 թվականի համեմատ 2023 թվականին աճը կազմել է 2465.1 հազ. դրամ կամ 66.2 %, որը պայմանավորված է հիմնականում նոր տեխնիկական միջոցների հագեցվածությամբ և տնտեսական գույքի ձեռքբերմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2023 թվականի հաղորդման

Հանրապետական և մայրաքաղաքային, մարզային սփոման տեսալսողական ծրագրերի գովազդային մուտքերը

Հաշվարկի հիմքում տեսալսողական ծրագրեր իրականացնող ընկերությունների կողմից հրապարակված գնացուցակներն են (տեսալսողական հաղորդումների ընթացքում գովազդվող ապրանքները (product placement) հաշվարկված չեն):

Գծապատկեր 27. Հանրապետական և մայրաքաղաքային սփոման տեսալսողական ծրագրերում հեռարձակվող գովազդն ըստ տեսակների

6188.4 ժամ
ՈՒՂԻՂ ԳՈՎԱԶԴ

1002.6 ժամ
ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

189.5 ժամ
ՀՈՎԱՆԱՎՈՐՁՈՒԹՅՈՒՆ

132.2 ժամ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

57 ժամ
ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գծապատկեր 28. Հանրապետական և մայրաքաղաքային սփոման տեսալսողական ծրագրերում հեռարձակվող գովազդային մուտքերի ծավալներն ըստ տարիների

մլն. ՀՀ դրամ



Գծապատկեր 29. Մարզային սփոման տեսալսողական ծրագրերում հեռարձակվող գովազդն ըստ տեսակների

1611 ժամ
ՈՒՂԻՂ ԳՈՎԱԶԴ

131 ժամ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

4 ժամ
ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

1 ժամ
ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ

1 ժամ
ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գծապատկեր 30. Մարզային սփոման տեսալսողական ծրագրերում հեռարձակվող գովազդային մուտքերի ծավալներն ըստ տարիների

մլն. ՀՀ դրամ

2021	2022	2023
1094	36,9	12,2

Գծապատկեր 31. Հանրապետական և մայրաքաղաքային ծածկույթի լողական ծրագրերում հեռարձակվող գովազդն ըստ տեսակների

8772.7 ժամ
ՈՒՂԻՂ ԳՈՎԱԶԴ

159 ժամ
ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

132.1 ժամ
ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ

49.9 ժամ
ՔԱՂԱՔԱԿԱՆ

46.3 ժամ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Գծապատկեր 32. Հանրապետական և մայրաքաղաքային ծածկույթի լողական ծրագրերում հեռարձակվող գովազդային մուտքերի ծավալներն ըստ տարիների

մլն. ՀՀ դրամ

2020	2021	2022	2023
1.397	1.275	1.482	1.457

Գծապատկեր 33. Մարզային ծածկույթի լսողական ծրագրերում հեռարձակվող գովազդն ըստ տեսակների

1609.4 ժամ
ՈՒՂԻՂ ԳՈՎԱԶԴ

8.5 ժամ
ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ

1.4 ժամ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Գծապատկեր 34. Մարզային ծածկույթի լսողական ծրագրերում հեռարձակվող գովազդային մուտքերի ծավալներն ըստ տարիների

մլն. ՀՀ դրամ

2021	2022	2023
45.1	76,5	92,7

ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՎԱԾ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Հավելված N 2
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2023 թվականի հաղորդման

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՏՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«Գեղամա» «ՍևանՏիՎի1» («ԷսՏիՎի1»)	21.08.2020 թ.
2	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	«Ֆորտունա»	21.08.2020 թ.
3	«ՑԱՅԳ» ՍՊԸ	«Ցայգ»	21.08.2020 թ.
4	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	«Կենտրոն Թիվի»	21.08.2020 թ.
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	«Լոռի»	21.08.2020 թ.
6	«ՇԱՐԿ» ՍՊԸ	«5-րդ պլիք» «5 պլյուս» «5-րդ ռադիոպլիք»	21.08.2020 թ.
7	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	«Կոտայք Թի Վի»	21.08.2020 թ.
8	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	«Երկիր մեդիա»	28.08.2020 թ.
9	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	«Անկյուն գումարած 3»	28.08.2020 թ.
10	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	«Ռադիո Երևան»	28.08.2020 թ.
11	«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	«Բուն Թիվի»	28.08.2020 թ.
12	«ՕԴԱԿ» ՍՊԸ	«Սոնգ Թիվի» «Թրավելինգ Թիվի»	28.08.2020 թ.
13	«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ	«Ա1+»	28.08.2020 թ.
14	«ՇԱՆԹ» ՍՊԸ	«Շանթ» «Շանթ Պրեմիում» «Շանթ Մյուզիք» «Շանթ Նյուզ» «Շանթ Սերիալ» «Շանթ Քիդս» «Շանթ Սպորտ» «Շանթ Քոմեդի» «Շանթ Գյումրի» «Շանթ Ֆիլմ» «Շանթ Քուքինգ»	04.09.2020 թ.
15	«ՄԵԴԻԱ ՆՅՈՒՔ» ՍՊԸ	«Արարատնյուզ Թի Վի»	04.09.2020 թ.
16	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	«Արմենիա» «Արմենիա Պրեմիում» «Քոմեդի» «ՀայԿինո» «Ջան Թիվի» «Սերիալ»	08.09.2020 թ.
17	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	«ՄԻԳ թիվի» «ՄԻԳ ռադիո»	08.09.2020 թ.
18	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ա-ԹԻՎԻ»	08.09.2020 թ.

19	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	«Կինոման» «Լայֆ Հաք» «Հայ Թիվի» «Թավա Թիվի» «Խաղալիք» «ABN Armenian Business News» «Բազմոց Թիվի» «Ֆիթնես Թիվի» «Մուզզոն»	18.09.2020 թ.
20	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	«Հայկական երկրորդ հեռուստալիք»	18.09.2020 թ.
21	«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ	«Հիբրիդ Ռեստ» «Հիբրիդ Ֆիլմ» «Հիբրիդ Սպորտ» «Հիբրիդ Էդուքեյշընն»	18.09.2020 թ.
22	«ՁԱԳԵԶՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	«Սյունիք ՏՎ»	18.09.2020 թ.
23	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	«Նոր Հայաստան»	, 18.09.2020 թ.
24	«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	«Ֆրի Նյուզ»	18.09.2020 թ.
25	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Տավուշ ՏՎ» «Տավուշ ԷՖԷՄ»	28.09.2020 թ.
26	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ	«Դելտա Թիվի» «Դելտա Թրեվլ» «Դելտա Մյուզիք»	19.10.2020 թ.
27	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«21 Թիվի»	19.10.2020 թ.
28	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ	«ԳԱԼԱ հեռուստաընկերություն»	19.10.2020 թ.
29	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	«Առաջին Թիվի»	19.10.2020 թ.
30	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	«Արմա Թի-Վի»	02.11.2020 թ.
31	«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Նուռ» «Վելարի» «Սան Թիվի» «Այ Թի Սի» «Արմթուն Թիվի» «Վի»	02.11.2020 թ.
32	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«Առաջինի լրատվական ալիք»	10.11.2020 թ.
33	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ազատություն Թիվի»	03.02.2021 թ.
34	«ԹԻՎ 1 ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 2020» ՍՊԸ	«Թիվ 1»	03.02.2021 թ.

35	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	«Էֆ Թիվի» «Էֆ Քիդս» «Արարատ Թիվի» «Արարատ Ռադիո»	19.02.2021 թ.
36	«ԻԳԼ ԱՅ» ՍՊԸ	«Թիվի 9 էյ էմ»	12.03.2021 թ.
37	«ՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«Նոյյան Տապան»	02.04.2021 թ.
38	«ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊԸ	«Թու. Սպորտ»	27.05.2021 թ.
39	«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ	«Մեկ էֆ էմ»	04.06.2021 թ.
40	«ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Հոուփ»	11.06.2021 թ.
41	«ՋԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Ջարկ Ֆմ»	11.06.2021 թ.
42	«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՖասթՍպորտս»	06.08.2021 թ.
43	«168 ԺԱՄ» ՍՊԸ	«168 Ժամ»	06.08.2021 թ.
44	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	«Ռադիո Վան»	04.11.2021 թ.
45	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ	«Ռուսսկոյե ռադիո»	04.11.2021 թ.
46	«ԷԳԱԼԻՏԵ» ՍՊԸ	«Ֆազ էֆ էմ»	26.11.2021 թ.
47	«ՌԱԴԱՐ ԱՐՄ»ՍՊԸ	«Ռադար Ռադիոկայան»	24.02.2022 թ.
48	«ԽՈՒՍՏՈՒՓ ԷՖ ԷՄ» ՍՊԸ	«Խուստուփ»	16.03.2022 թ.
49	ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ	«Ռադիո Վան Գյումրի»	13.04.2022 թ.
50	«ՍՓՐԻՆԳ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ	«Կենդանի բնություն» «Տուն 4Կ» «Զբոսաշրջիկի աչքերով» «Զբոսաշրջիկի աչքերով 4Կ» «Ապրիր ակտիվ»	06.05.2022 թ.
51	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	«Սիթի ՖՄ»	30.05.2022 թ.
52	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ	«Տունտունիկ» «Սինեման»	04.07.2022 թ.
53	«ՌԻԲՈԼՈՎՆՈԵ ԹՎ» ՍՊԸ	«Ռիբոլովնոե ԹՎ»	21.10.2022 թ.
54	«ԼԱՎ ՌԱԴԻՈ» ՍՊԸ	«Լավ Ռադիո» «Լավ Ռադիո Միքս» «Լավ Ռադիո Հիթ» «Լավ Ռադիո Դենս»	26.01.2023 թ.
55	«ՄԵԴԻԱ ՄԱՐՍԵՏ» ՍՊԸ	«Ռադիո Էներջի» «Էմ էֆ էմ Ռադիո» «Էքս էֆ էմ Ռադիո» «Ռադիո Սքայ» «Մետրո էֆ էմ»	26.01.2023 թ.

Հավելված N 3
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2023 թվականի հաղորդման

ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՄԱՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
Ք. ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	24.11.2015 թ.- 24.11.2025 թ.
2	«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	14.01.2017 թ.- 14.01.2027 թ.
3	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Տավուշի և Սյունիքի մարզեր	03.10.2017 թ.- 03.10.2027 թ.
4	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի և Լոռու մարզեր	03.10.2017 թ.- 03.10.2027 թ.
5	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	22.12.2017 թ.- 22.12.2027 թ.
6	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզեր	10.04.2018 թ.- 10.04.2028 թ.
7	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզեր	05.05.2018 թ.-05.05.2028 թ.
8	«ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Գեղարքունիքի մարզ	28.08.2019 թ.- 28.08.2029 թ.
9	«ՅՈՏԱ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Տավուշի մարզեր	08.10.2019 թ.- 08.10.2029 թ.
10	«ԹԻՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	14.07.2020 թ.- 14.07.2030 թ.
11	«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի և Վայոց ձորի մարզեր	15.09.2020 թ.- 15.09.2030 թ.
12	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	25.09.2020 թ.- 25.09.2030 թ.
13	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.10.2020 թ.- 24.10.2030 թ.
14	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն	29.04.2021 թ.- 29.04.2031 թ.
15	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.09.2021 թ.- 24.09.2031 թ.
16	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	21.10.2021 թ.- 21.10.2031 թ.

17	«ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.06.2022 թ.- 24.06.2032 թ.
18	«ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	10.08.2022 թ.- 10.08.2032 թ.
19	«ՋԻԷՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	30.09.2022 թ.- 30.09.2032 թ.
20	«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	17.10.2022 թ.-17.10.2032 թ.
21	«ԱՅՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	08.12.2023 թ.-08.12.2033 թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	07.07.2015 թ.- 07.07.2025 թ.
2	«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	21.03.2020 թ.- 21.03.2030 թ.
3	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	27.05.2020 թ.- 27.05.2030 թ.
4	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	11.06.2021 թ.- 11.06.2031 թ.
5	«ԱՅ-ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	22.07.2021 թ.- 22.07.2031 թ.
6	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	16.06.2022 թ.-16.06.2032 թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի և Լոռու մարզեր	11.01.2014 թ.- 11.01.2024 թ.
2	«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզեր	15.12.2017 թ.- 15.12.2027 թ.
3	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզեր	08.10.2019 թ.- 08.10.2029 թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	24.12.2020 թ.-24.12.2030 թ.
2	ՄԱՆՎԵԼ ՎԱՂԻՆԱԿԻ ՓԱՇԻԿՅԱՆ ԱՁ	ՀՀ Արագածոտնի մարզ	10.02.2021 թ.-10.02.2031 թ.
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	09.11.2015 թ.-09.11.2025 թ.
2	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	23.05.2022 թ.-23.05.2032 թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՀԱՈՒԶ ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	29.07.2017թ.-29.07.2027թ.
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	04.07.2017 թ.- 04.07.2027 թ.
2	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	09.04.2019 թ.- 09.04.2029 թ.
3	«ՌԵԳԻՈՆՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	23.09.2020 թ.- 23.09.2030 թ.
4	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	29.12.2022 թ.- 29.12.2032 թ.
5	«ՄԻՐԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	05.05.2023 թ.- 05.05.2033 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	09.11.2015 թ.- 09.11.2025 թ.
2	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	05.04.2016 թ.- 05.04.2026 թ.
3	«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	20.07.2018 թ.- 20.07.2028 թ.
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ՍՄԱՅԼ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	06.09.2014 թ.- 06.09.2024 թ.
2	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	25.07.2017 թ.- 25.07.2027 թ.
3	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	03.08.2017 թ.- 03.08.2027 թ.
4	«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	05.05.2018 թ.- 05.05.2028 թ.
5	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	22.04.2020 թ.- 22.04.2030 թ.
6	«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	10.09.2020 թ.- 10.09.2030 թ.
7	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	26.11.2020 թ.- 26.11.2030 թ.
8	ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ	ՀՀ Կոտայքի մարզ	22.07.2021 թ.-22.07.2031 թ.
9	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	05.08.2021 թ.- 05.08.2031 թ.
10	«ՕԼԼՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	26.09.2023 թ.- 26.09.2033 թ.
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	02.08.2017 թ.-02.08.2027 թ.
2	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	10.07.2021 թ.- 10.07.2031 թ.
3	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	19.05.2022 թ.- 19.05.2032 թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	09.10.2014 թ.- 09.10.2024 թ.
2	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	24.03.2015 թ.- 24.03.2025 թ.
3	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	21.12.2016 թ.- 21.12.2026 թ.
4	«ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	22.06.2022 թ.- 22.06.2032 թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
1	«ՕՆԼԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Վայոց ձորի մարզ	30.03.2022 թ.-30.03.2032 թ.
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	30.09.2017 թ.- 30.09.2027 թ.

Հավելված N 4
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2023 թվականի հաղորդման

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՐԳԱՎԻՃԱԿ	ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ/ԿԱՐՃՈՒՄ/ԿԱՍԵՑՈՒՄ
	2-ական		
1	«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք Տուգանք
2	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք Տուգանք
3	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք Տուգանք
4	«ԱՐԱՑ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք Տուգանք
5	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք Տուգանք
6	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	Հեղինակազորված	Վարչական վարույթի կասեցում Կարճում
7	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք Տուգանք
8	«ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ » ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
9	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Կարճում Տուգանք
10	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Կարճում Կարճում
11	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք Տուգանք
12	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	Լսողական ծրագրեր հեռարձակող	Լիցենզիայի գործողության կասեցում Տուգանք
13	«ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊԸ (նախկինում՝ «ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ» ՍՊԸ)	Լսողական ծրագրեր հեռարձակող	Կարճում Տուգանք
14	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	Հեղինակազորված	Կարճում Տուգանք
	1-ական		
15	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	Հեղինակազորված	Տուգանք
16	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
17	«ԱՑ-ՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
18	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
19	«ԱՐՏ ԹԻՎԻ ՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
20	«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Գրավոր նախազգուշացում

21	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
22	«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
23	«ԳԼՈԲԱԼ ՔՈՆԹԵՆԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	Դիստրիբյուտոր	Տուգանք
24	«ԷՅԶՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
25	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Կարճում
26	«ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ»» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
27	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
28	«ԻՐԻԴԱ ԳԼՈԲԱԼ» ՍՊԸ	Հեղինակազրկված	Տուգանք
29	«ԻՔՍ ԹԻՎԻ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
30	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
31	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	Հեղինակազրկված	Տուգանք
32	«ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» ԱՁ	Ցանցային օպերատոր	Տուգանք
33	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
34	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
35	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
36	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Կարճում
37	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
38	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
39	«ՄԱՅ-ՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
40	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
41	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
42	«ՋԻԷՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
43	«ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍՊԸ	Հեղինակազրկված	Տուգանք
44	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
45	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր հեռարձակող	Գրավոր նախազգուշացում
46	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
47	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
48	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
49	«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
50	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք

Հանձնաժողովի կողմից վարչական տույժի ենթարկելու որոշումների դեմ բերված բողոքներ

1. Հանձնաժողովի կողմից վարչական տույժի ենթարկելու որոշումների դեմ բերված բողոքներով դատարաններում քննվել է 9 վարչական գործ՝

«Ամեդիա», «Շարկ», «Հիբրիդ Բրոդքասթինգ», «Ռադիո Վան», «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊ ընկերություններ՝ 1-ական վարչական գործ,

«Հուսաբեր» ՓԲ և «Մարտունի ՏՎ» ՍՊ ընկերություններ՝ 2-ական վարչական գործ:

2. ***Սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների որոշումների դեմ 9 վարչական գործ***, որից 8-ը ներկայացվել է «Հայկական երկրորդ հեռուստալիք», իսկ 1-ը՝ «Հոուփ Մեդիա» ՍՊ ընկերությունների կողմից:

3. ***Իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջով դատարաններում քննվել է 3 վարչական գործ՝*** «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցերով Հանձնաժողովի՝ 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 104-Ա, 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 86-Ա և 2022 թվականի հունիսի 13-ի թիվ 85-Ա որոշումները պատասխանողին անստորագիր ներկայացնելու վերաբերյալ:

4. ***Գործողության կասեցման հայցով քննվել է 1 վարչական գործ՝*** «Հուսաբեր» ՓԲ ընկերության՝ «Հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփռման հեռարձակման իրականացումն ապահովելուն պարտավորեցնելու» պահանջով՝ մինչև ՎԴ/2112/05/21 վարչական գործի շրջանակներում գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը:

5. Նույն «Հուսաբեր» ՓԲ ընկերության ներկայացրած հայցով դատարանում քննվել է նաև ***պարտավորեցման հայցապահանջով 1 վարչական գործ՝*** «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին ձեռնպահ մնալ «Հուսաբեր» ՓԲԸ կողմից հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփռման հեռարձակման իրականացումը դադարեցնելուց մինչև թիվ ՎԴ/2112/05/21 վարչական գործի շրջանակներում գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը»:

6. ***1 վարչական գործ քննվել է*** «Սոլիդ Փարթներ» ՍՊ ընկերության ներկայացրած հայցով՝ «Հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 85-Ա՝ «ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ-ի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և «ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊ ընկերությանը վարչական պատասխանատվության ենթարկելուն պարտավորեցնելու պահանջի մասին»:

Դատարաններում ավարտված վարչական գործեր

• «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի նկատմամբ կայացված՝ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը խախտելու (հասույթը չներկայացնելու) մասով վարչական տույժի ենթարկելու մասին Հանձնաժողովի՝ 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 86-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցով: Հայցը մերժվել է, վերաքննիչ բողոքը՝ ևս, վճռաբեկ բողոք չի տարվել: 2023 թվականի հունվարի 23-ին վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

• «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի նկատմամբ կայացված՝ Հանձնաժողովի՝ 2022 թվականի հուլիսի 15-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփոման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 103-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցով: «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊ ընկերության հայցը (երրորդ անձ՝ «:Բուն» գիտամշակութային հիմնադրամ ՎԴ), վերաքննիչ բողոքը մերժվել են և 2023 թվականի օգոստոսի 18-ին Վճռաբեկ դատարանը մերժել է բողոքը վարույթ ընդունել:

• «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի նկատմամբ կայացված՝ Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 28-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփոման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 137-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին հայցով: Հայցը մերժվել է, իսկ 2023 թվականի հունիսի 30-ին Վերաքննիչ դատարանը հայցվորի վերաքննիչ բողոքը վերադարձրել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Վճռաբեկ բողոք չի ներկայացվել:

• «Հուսաբեր» ՓԲԸ-ի՝ «Հանձնաժողովին ձեռնպահ մնալ հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփոման հեռարձակման իրականացումը դադարեցնելուց մինչև թիվ ՎԴ/2112/05/21 վարչական գործի շրջանակներում գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը» պարտավորեցման հայցով: 2023 թվականի փետրվարի 21-ին Վարչական դատարանում գործի վարույթը կարճվել է:

• «Հուսաբեր» ՓԲԸ-ի՝ «Հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփոման հեռարձակման իրականացումն ապահովելու պարտավորեցնելու պահանջի մասին, մինչև ՎԴ/2112/05/21 վարչական գործի շրջանակներում գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը» պարտավորեցման հայցով: 2023 թվականի փետրվարի 21-ին Վարչական դատարանում հայցադիմումի ընդունումը մերժվել է: 2023 թվականի ապրիլի 6-ին ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու մասով բավարարել է բողոքը, հայցի ապահովման մասով՝ մերժել: 2023 թվականի հուլիսի 28-ին Վարչական դատարանը հայցադիմումը վերադարձրել է՝ գործողության կատարման հայցի թույլատրելիության հիմքով:

ՀՀ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում հանձնաժողովի օգտին կայացված վճիռներ և որոշումներ

1. «Հոուփ Մեդիա» ՍՊ ընկերության հայցով՝ Հանձնաժողովի՝ 2021 թվականի օգոստոսի 13-ի «Լսողական ծրագրի 99.7 ՄՀՑ հաճախականության օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 134-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին: 2022 թվականի հոկտեմբերի 27-ին վարչական դատարանում հայցը մերժվել է: 2023 թվականի նոյեմբերի 30-ին Վերաքննիչ դատարանում բողոքը մերժվել է, վճիռը թողնվել է անփոփոխ: Վճռաբեկ բողոքի մասին դեռևս տեղեկություն չկա:

2. «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊ ընկերության հայցով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը խախտելու հիմքով վարչական տույժ կիրառելու մասին Հանձնաժողովի՝ 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 86-Ա «Որոշումը պատասխանողին անստորագիր ներկայացնելու պատճառով» իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին: 2023 թվականի մարտի 15-ին Վարչական դատարանում հայցը մերժվել է: Գործը քննության մեջ է գտնվում Վերաքննիչ վարչական դատարանում:

3. «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի՝ 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ա որոշմամբ՝ «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» մրցույթին հաղթող ճանաչելու, լիցենզիա տրամադրելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին: 2023 թվականի մարտի 17-ին Վարչական դատարանում հայցը մերժվել է: 2023 թվականի ապրիլի 17-ին վճիռը մտել է օրինական ուժի մեջ, և հայտարարվել է մրցույթ: 2023 թվականի մայիսի 26-ին հայցվորը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին միջնորդությամբ: Վարչական գործը քննվում է Վերաքննիչ վարչական դատարանում:

4. «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի՝ 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 93-Ա որոշմամբ՝ «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» մրցույթին հաղթող ճանաչելու, լիցենզիա տրամադրելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին: 2023 թվականի հունվարի 12-ին Վարչական դատարանում վարույթը կարճվել է: 2023 թվականի մարտի 1-ին հայցվորի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել՝ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին միջնորդությամբ: Վարչական գործը քննվում է Վերաքննիչ վարչական դատարանում:

5. «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի՝ 2022 թվականի դեկտեմբերի 2-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 143-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին: 2023 թվականի փետրվարի 22-ին Վարչական դատարանում հայցը բավարարվել է: 2023 թվականի մարտի 21-ին Հանձնաժողովի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: 2023 թվականի հոկտեմբերի 5-ին Հանձնաժողովի բողոքը բավարարվել է: 2023 թվականի նոյեմբերի 16-ին հայցվորի կողմից վճռաբեկ բողոք է տարվել:

6. «ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ» ՍՊ ընկերության հայցով՝ «Գովազդի մասին» օրենքի 16.1 հոդվածի խախտման հիմքով վարչական տույժ կիրառելու մասին Հանձնաժողովի՝ 2022 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 145-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: 2023 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ վարչական դատարանում հայցը մերժվել է:

Հավելված N 8
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2023 թվականի հաղորդման

Հանձնաժողովի կողմից բողոքարկված վճիռներ

1. «Հուսաբեր» ՓԲԸ-ի հայցով՝ Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասով վարչական տույժ կիրառելու մասին Հանձնաժողովի՝ 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ 98-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին: 2022 թվականի դեկտեմբերի 14-ին Դատարանը հայցը բավարարել է: 2023 թվականի հունվարի 14-ին Հանձնաժողովի կողմից Վերաքննիչ բողոք է ներկայացվել:

2. «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի հայցով՝ «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի բ) կետով սահմանված դրույթը խախտելու հիմքով վարչական տույժ կիրառելու մասին Հանձնաժողովի՝ 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 104-Ա «Որոշումը պատասխանողին անստորագիր ներկայացնելու պատճառով» իրավահարաբերության բացակայության ճանաչելու պահանջի մասին: 2023 թվականի հոկտեմբերի 18-ին Դատարանը հայցը բավարարել է: 2023 թվականի նոյեմբերի 11-ին վերաքննիչ բողոք է ներկայացվել Հանձնաժողովի կողմից: 2023 թվականի դեկտեմբերի 4-ին վերաքննիչ բողոք է ներկայացվել նաև «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի կողմից՝ վճռի մի մասի վերաբերյալ:

3. «Հայկական երկրորդ հեռուստալիք» ՍՊԸ-ի հայցով թիվ ՎԴ/4730/05/22 վարչական գործը՝ Օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասի հիմքով վարչական տույժ կիրառելու Հանձնաժողովի՝ 2022 թվականի հունիսի 13-ի թիվ 85-Ա «Որոշումը պատասխանողին անստորագիր ներկայացնելու պատճառով» իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին: 2023 թվականի հոկտեմբերի 16-ին Դատարանը հայցը բավարարել է: 2023 թվականի նոյեմբերի 8-ին Հանձնաժողովի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել:

ՀՌՀ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ
2023

www.tvradio.am